

## Կ. ՊՈԼՍՈՅ ՊԵՅՈՂԼՈՒԻ ՀԱՅՈՑ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆԸ

ԵՒ ԿՈՒՐԱՐԻՆԻ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԱՊԱՆԳԱԿՐԵՆԵՐ

— (Ընթերցողական)

### Գ. ԳՐԱԽՈՐ ԿԱՍՅՈՒԹԻՒՆՆԵՐ

Վերն Ս. յօդուածին մէջ կամօրոյնիկէ Հայերու Կ. Պոլսոյ Ղալաթիա եւ յետոյ հետզհետէ բերա հաստատուած ըլլալուն վրայ համառօտակի խօսեցայ. իսկ Բ. յօդուածին մէջ յառաջ բերի այն բերանացի աւանդութիւնները, զոր Բերայի կամօրոյնիկէ Հայերը կամ Բերայի հետ-գոյն հայ բնակիչները կը պատմեն մինչեւ ցայ-սօր: Սոյն աւանդութիւններէն ստոյգը կամ սխալն որոշել թող առած էի Գ. յօդուածին: Յիշեալ յօդուածներուն մէջ պարունակուած կարճ տեղեկութիւններու առթիւ՝ Կ. Պոլսոյ «Ժամանակ», (1911, Թ. 753, 57, 61, 63, 65) ինչպէս նաեւ «Բիւզանդիոն», (1911, Թ. 4401—4, 8, 9, 12—5, 7, 8, 20, 21, 4, 5) թերթերու մէջ Գր. Մարգարեան եւ Ս. Ս. Ալպայանքան յօդուածներու շարք մը հրատարակեցին, առանց չունչ առնե-լու եւ առնել առաւ՝ «հացի կոտի», զձուռ ներկայացում մը կարծես պարելով, որով իմ առած համառօտ տեղեկութիւններս անհիշդ եւ նպատակաւոր ցուցնելու աշխատեցան, զգրախ-տաբար այնպիսի ոճով մը՝ որ պատմագրութեան յատուկ չէր, եւ այնպիսի ոգւով մը՝ որ երկու-գար յառաջ Կ. Պոլսոյ մէջ այս կարգի նիւթե-րու վրայ գորշներու յատուկ էր:

Չեմ ինչուր չկրկնել իրենց՝ լիովն հա-մոզմամբ՝ ինչ որ չորս տարի յառաջ Կ. Պոլսոյ հանրածանօթ պատմագիր Բոխիշը նմանօրինակ առթիւ կը գրէր.

«Երբ մէկը բանասիրական կամ պատմա-կան ինքզին մէջ կ'ուսումնասիրէ եւ զայն խաւ-րարոր պիտի թնէ մը զուրս քաշել հանելու կը ձգնի, նոյն նիւթին վրայ ուրիշ աշխատողներ պարտաւոր են քաջալերութեան եւ օգնութեան ձեռն կարգաւել վստասողովն, եւ անոր մութ թողած կամ չկրցած ծանցած կէտերն աւելի ձշգըն եւ որոշել, ոչ թէ յախուռ բուռերով ճշմարտութեան սրտելու եւ իրան իրեւ սուս ներկայացնելու հետամուտ ըլլալ», («Արեւիք», 1907, Թ. 6534):

Ինքզին լուսաւորութեան համար հար-կաւոր կը համարիմ՝ նախորդ յօդուածին մէջ բովանդակուած աւանդութեանց քննութեան

մոնելէն յառաջ, Ս. յօդուածին սկիզբը վե-րադառնալ, որ մասնաւոր բունն ընդգրկու-թեան բանեցաւ, եւ աւելի ընդարձակել նիւթը: Միւս ընդգրկուագրական կէտերն՝ ցորափ պատ-մութեան կը վերաբերին, յոյնացի ուսումնա-սիրութեանն նկատողութեան կ'առնուին:

Գրած էի՝ որ Բէֆէի (Կաթա) շինողական տիրապետութեան տտն, շինողացիներ, կ'են-թացորուի՝ տեղւոյն լատին (Գոմիսիկեան) քա-հանները, Բէֆէի հայ գաղթականութիւնը Հռոմայ եկեղեցւոյ հպատակութեան եւ կամօ-ղիկէ դաստնութեան վատարկած էին արդէն 1318ին: Թէ ինչ միջոցներով՝ այն կը մնայ ան-ծանօթ, եւ մեր ինքզին հետ կապ չունի. Կոն-ստանթնուլի չէ բանաւորապէս ենթադրել՝ որ մինչեւ վերջին Հայը կամօղիկէ եղած ըլլայ: Հռոմայ Յովհ. Ի. Բաշանայապետին 1318ին Բէֆէի Հայ գաղթեցեան գրած նամակն կ'ե-րեւայ՝ որ հայ ժողովուրդն իր Երեմիա անուն նախկողորոտով միասին Հռոմայ կամօղիկէ հաւատքն ընդունած էր: Ուսնալդ (ամ. 86. 1318, § 8—12) պատմէնէն ետեւ՝ թէ Կիլիկիոյ Սաշին թագաւորն ու Յակոբ Կամօղիկոսը Յովհ. Ի. Բաշանայապետին նուիրակները սիրով ընդու-նեցան եւ հաւատոյ դաստնութիւն տուին, կը գրէ՝ թէ նաեւ Խորիի Հայեր Հռոմայ եկեղեցւոյ հետ միասնեցան, եւ Բէֆէի չիրօղած (Յե-րոնիմոս) Եպիսկոպոսն առնել՝ իրեն. ներկայա-ցուցի Հռոմայ եկեղեցւոյն եւ Բաշանայապե-տին, երգմամբ դաստնեցան կամօղիկէ հաւատքը, խոստացան նոյնն անխախտ եւ անարատ պահե-լու, եւ յայտնեցին իրենց մեծարարքը: Երբ այս լուրը Յովհ. Ի. Բաշանայապետին հասաւ՝ Բէֆէի Հայ ժողովուրդն ուղղեց հետեւեալ նամակը.

«Վերջին ատօմանի գահութիւն գոյցենց՝ իմա-նայով այն լուրը, թէ լուսոյ ամենաբարձր Արարիչը ցուցնելով ի իւր իւր զօրութիւնը, իւր ճշմարիտ մա-տապաններով յիւ միտքը լուսաւորած է, որով խաւ-տացեք երգմամբ՝ անասուն պահելու այն կամօղիկէ հաւատքը, զոր ունի ճշմարտաւոր հաւատական ուղե-մայր եկեղեցին, զոր կը ստեղծեն հաւատարմութեան եւ զոր կը քարոզէ, եւ թէ խոստացեք հնոյանդու-թիւն Հաւատական Բաշանայապետին եւ անոր Եկե-ղեցին, ի ձեռն մեծարող եղբոր մեջ Եւրոպոյ, Եւրո-պոյն Կոնստանդնուպոլսոյ Եւրոպոյն կը ընթանայ, որ պահելով այս Եկեղեցւոյ փրկաւոր վարդապետութիւն-ները, պահեք իւր սովորութիւնները, ի մասնաւոր ինչ որ կը վերաբերի խորհրդոց ամենեւ գրաւորներ, որ է անճառ խորհուրդն Սեղանոյ: Վասն զի թէեւ միւս ամեն խորհուրդները օրդարար շնորհք կու տան, առ-կայն յայտն քաջանգակուած է Յիսուս Բերսաստ առ-բողջ՝ իրեն խորհուրդ, հացի եւ գինոյ անասններուն

տակ, որոնք Յուզով՝ հաջը գոյադափուտան է Ի Մարմնի Գիտութիւն Գրքատարի, եւ գինին՝ ՍՊԵՆՆԻՆ՝ Անոր համար՝ Կուզենք որ գիտնաք, թէ Հռոմայ սուրբ եկեղեցին կը սորվեցնէ, կը հրամայէ, կը պահէ խառնել լուս փրկարար բաժակին մէջ...» (Perpétuité d. l. Foi, Migne, III, p. CXXXIII. և.ն.)

Երեմիա Եպիսկոպոսի եւ ի բ ժողովրդեան վիճակին վրայ ուրիշ տեղեկութիւններ ծանօթ չեն առ այժմ, եւ իրաւունք չունինք ենթագրութիւններու գիմարու։ Ինչ որ Հ. Չամչեան (Գ. 316) կ'աւանդէ՝ թէ այս Հայերը հետզհետէ Հռոմայ եկեղեցիէն զարձեալ բաժնուեցան, պէտք է հասկնալ՝ իրր գար մ'եղբը։ Ապոյաճեան կը հաստատէ՝ թէ Ռայնայի լատին ժամանակագիրն այսպէս աւանդած ըլլայ։ Ռայնայի մէջ այսպիսի յիշատակութիւն չկայ, Ինչպէս յօդուածիս շարունակութենէն պիտի տեսնուի, Բեֆէի Հայերը մինչեւ ԺԵ դարուն սկիզբները կաթողիկէ էին։

Եովհ. Ի.Բ., որ 1328ին հաստատած էր Միաբանող Եղբարք (Ունիթոս, հայազգի հայաւտնանէս Գոմինիկեան կրօնաւորներ) Միաբանութիւնը, Պարսկաստանէն մինչեւ Խրիմ իրենց համար հինգ Եպիսկոպոսական աթոռներ որոշեց, որոնց երկուքն էր Բեֆէի աթոռը։ Եւ արդէն 1343էն յառաջ կը գտնենք՝ Թագէտոս անուն Բեֆէի ունիթոս հայ Եպիսկոպոսն, որուն յաջորդներն ալ այսօր ծանօթ են, գէթ մինչեւ 1400ի սկիզբները։

Աղեմէս Կարանոս (Միաբ. Ա. Ման, Հ.Ո. 1650, էջ 527) կը յիշէ Ունիթոսներէն Բեֆէի Եպս.Ն Երբ Թագէտոս։ Կոնստանտ. Հ. Ալիշան (Աւրարատ, էջ 545, Ժ. 1) կը գրէ. «Երկու ժամանակ Եպիսկոպոսը երեւին կացեալ ի Կաֆա մերձ ժամանակը, կամ երկու կալեալ միշտ Կաթոն, զի յետ Թագէտի՝ զոր Նուիրակ առաքեաց Եովհ. առ Լեւոն Գ. Թագաւոր մեր, յիշի Ստեփանոս եւ այլ ռեմ Եպիսկոպոս Կաֆայի, եւ ապա Կաթոնը Թագէտոս, որոյ եւ վախճան յիշի յայլու՝ Զեռագրի (եւ այն պահեալ ի քաղաքի ուրեմ յառաջիկա)։ «Եովհ. Տեառն մերոյ Գիտութի Գրքատարի ՌԵԾԻ, ամիս Օգ. ԻԳ ի չորս ժամն, հանգեալ ի Գրիստոս պատուելի Հայրն Տէր Թագէտոս Եպիսկոպոս Կաֆայի», Չայս յառաջ բերած են նաեւ Հ. Տաշեան (Յուզ. Կ. յարկն. Մոգր. Վիենն. էջ 8Բ.) եւ Կ. Յ. Պատմաճեան («Երեւն», 1891, Ա. 8ր. Թ. 25) ոչ ճշդութեամբ։ Սակայն եւ ոչ Հ. Ալիշանին ճիշդ գնահատին հետ, զոր 14 արար յառաջ տեսայ անձամբ հիւսիսային Խաթունի Pavia քաղաքը, Համալսարանի Մատենադարանը (Թիւ 346),

Այս Զեռագիրը՝ Տեառնայի-Ժամագիրը, մեր խնդրոյն համար շատ կարեւորութիւն ունի։ Ասոր մէջ գրուած է՝ «Եամին 1343... եւ Թագէտոս եղբարք Կարգին սուրբ տօմինիկոսի, եւ... Եպիսկոպոս մայրաքաղաքին Կաֆա թարգմանեցին ի Ֆոնագ բառէ ի հայկական ժամանակագրոս, որ կոչի Գիտնալ...», 1350ին Բեֆէի մէջ «Ընդ հովանեաւ սուրբ Դիդիլայոսի», Քրիստոս կը գրէ «Իմաստասիրականք», գիրքը, եւ կը ծանուցանէ յետոյ որ Նոյն եկեղեցին ինքը շինել տուած է (Հ. Տաշեան, 721)։ Յիշեալ Թագէտոս ի Կարգէ Քարողաք, Կպս. Կաֆայի, 1354ին կը թարգմանէ զգիրս Եկեղեցիէն Խորհրդոյ Պատարագի յինձովի. Գ. Պապէ ի Պիզա, ընդ հովանեաւ Ս. Անտոնի հայտան (Հ. Տաշեան, Յուզ. Կ. Մ. Վիենն. էջ 7), «Եամին 1357, Օգ. 23 ի ժամ 3 հանգեալ ի Գրիստոս պատուելի հայրն Տէր Թագէտոս Կպս. Կաֆայի», (Զեռագ. Pavia)։

Ասոր յաջորդած է Տէր Կուռա. «Եամի 1363 Դեկտ. 25 օրն Բշ. երեկ Կաֆա Կպս. Տէր Կուռա ի Կարգէ Քրիստոսը (Minor) յամի Տեառն 1376 հանգեալ ի Գրիստոս պատուելի Եպիսկոպոս» (Զեռ. Pavia)։

Ասոր յաջորդած է Տէր Զուռա. «Եամի 1377 Մարտի 9 Տէր Զուռան պրեկատոր (Predicator = Գոմինիկեան) Եպիսկոպոս. Նոր Եպ. ին Վիշար Քրիստոսը պրեկատորն եղաւ յամի 1378 Հոկտ. 10 (Զ. Pavia)։

Ասոնց յաջորդները տակաւին ծանօթացած չեն, ինչպէս նաեւ անծանօթ է թէ որչափ ժամանակ տեւեց այնուհետեւ կաթողիկէ հայ հասարակութիւնն այնտեղ։ Միեւնթա Վ. Ապարանցի, ծնեալ 1350էն յառաջ, Ունիթոս, հետագոտող գրագէտ, 1410ին գրած տեղեկագրութեան մը մէջ կ'ըսէ.

«Եւ ոմանք կոչին Ժալը Հաբր, որ լեզուով են գրով ազգաւ են Հայք, բայց գաւառութեամբ են ամենայն օրինք են Յոյք, եւ ամենայն կարգաւ հնազանդ Նոցա, որպէս յայտ է այնքիւկ որը են ի յեղեղկէն եւ ի յայլ Հռոմոց տան եւ ի Կաթնէն ի Լորիմն եւ ի յայլ բազում տեղիս... Մորորութեան Անդրէասայ հետեւող Հայք... միայն լեզուով են գրով են Հայք, եւ այլով ամենայնիւ միաբան ընդ Նոյն Յունաց եւ ամենայն գրոյ Նոցա, որպէս յայտ է այժմ ի Հռոմոց տանէն մինչեւ ի Յոյք եւ ի Կաֆա եւ ի յայլ տեղիս, որը բազումը կան ի Նոյնոց յամենայն տեղիս։ Իսկ ոմանք կոչին Հայք Միաբանք, որ ամենայն կերպիւ են ըստ

այժմու Հայոց սովորութեանց, բայց ուխտի ընդ բանին որ վերաբերի ի գաւառութիւն հաւաքաց եւ ի փրկութիւն են համաձայն ընդ սուրբ եկեղեցւոյն»

“Իսկ ոմանք կոչին Հայք եւ միաբան կաթողիկ ըստ ուխտի Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին եւ ընդ սուրբ եկեղեցւոյ, որպէս այսոյ է պնդուիլ՝ որք են ի Կաֆա եւ յերկիրն Նախիջևանս եւ ի գաւառն Երևնջակոյ եւ այլ ըրազում տեղիս” (Հ. Արշան, Հայապատում, Ա, էջ 123, Բ. 553.) Ինչպէս այս խօսքերէն կ’երևայ՝ այն միջոցներուն տակաւին կաթողիկէ էին Բէֆէի Հայերը, ուր կային նաեւ Հայ-Հուսթանի Սահպնէր 1391ին Թաթարները բռնոր Ղրիմի տիրեցին եւ Բէֆէի հետ ստիպուեցան ակամայ բարեկամանալ, այնուհետեւ սկսան Ղրիմի Հայերը ներել. Ասոնք հալածանքէն խուսափելու համար Բէֆէ, Պեսարապիա եւ մինչեւ Լեհաստան քաղեցին քաղք քալլ. ընկղմեցին իրենց մէջ Բէֆէի կաթողիկէութիւն, գեթ ըստ մետաժանութեան. այնպէս որ 1433էն շատ տարիներ յառաջ Բէֆէի Հայերն իրենց Եպիսկոպոսով Հռոմէն անջատեալ էին, ինչպէս քիչ մը վար կը տեսնենք. եւ նոյն իսկ Ա. Ալթոյանէն՝ որ ի սկզբան հակառակ կը գրէր Բէֆէի Հայոց 1318ին կաթողիկէ եղած ըլլալուն, անշուշտ վասն զի եւ կ’ըսէի, զարմանալի հակասութեամբ քիչ ետքը կը գրէ. “Հ. Բուշնեքեանի կաթողիկ տարեգրութիւններէ քաղած վկայութիւններէն կը հաստատուի՝ թէ 1318ին Ղրիմի հայութեան միայն Բէֆէից հաստատան մէջ էր որ կաթողիկութիւն կը նշմարուէր (տ. Պատմ. գաղթիկ. Խրիմու Հայոց 1895, էջ 101), ան ալ, եթէ քօղը վեր առնուի, պիտի տեսնուի թէ ակամայ եւ բռնադատեալ”։ Այս ընդունելէն ետեւ՝ որ եական էր, կը սկսի Ալթոյանէն “հաւանորեն”, եւ “ներշնչութեամբ” քօղը վեր առնելու եւ “բացատրելու”, քանալ, թէ ինչ պարագաներու տակ կրնային կաթողիկէ եղած ըլլալ անոնք. ըստ իւր ներշնչութեան, եւ թէ Բէֆէի գուրս ոչ-կաթողիկէ Հայեր կային. Նիւթեր՝ որոնք մեր խնդրոյն հետ կապ չունին, եւ ոչ որ ժխտած է։

1475ին Թաթարաց Խանը Թուրքաց Կէստիկ Ահմետ փաշայի օգնութեամբ Բէֆէի գէմ պատերազմ մղեց. չննուցիները թողն Բէֆէն եւ փախան։ Հայերն ստան մը պատերազմը թէպէտ չարունակեցին, սակայն ստիպուեցան ի վերջոյ քաղաքը Թաթարաց Խանին, պայմանաւ՝ որ անձի եւ ստացուածոց խնայեն։ Ահմետ փաշա խոստացաւ, քաղաք մտաւ, եւ Հայոց իշխան-

ները խաբանք սեղանի հրաւիրեց անոնց, զամէրը զխառնեց, եւ քաղքին մէջ ծեղն ու տղայն, այլն ու կինն սրակոտոր ըրաւ. իսկ աղջիկները, պատանիները եւ մանկունք Պոլիս Սուլթանին ղրկեց։ Ասոնք էին միայն 1475ին Բէֆէէն Պոլիս բերուած Հայերը, որոնց մասին քիչ ետքը (տ. Տեր-Արքահաման, Պատմ. Խրիմու, Թեոք. 1865, Բ. 185, Բ. 63—65)։

Բէֆէ այնուհետեւ նոր բնակիչներ ունեցաւ։

Ղերդիշեալ 1378—1475 միջոցէն Բէֆէի մասին ծանօթ են նաեւ հետեւեալք։

1380ին Մարկոս ոմն ի Կաթն գրած է Գանձարան-Ցաղբարան (Macler, անգլ. Թ. 80).

1428ին Բերիտոստուր քահանայ “ի մայրաքաղաքն Կաթայի ընդ հովանեաւ Ս. Անտոնի Ճգնաւորի, յեպիսկոպոսութեան Բովանդայ Անկիւրացոյ, ի վանահայրութեան Սարգիս Ա. ի, գրած է Խաղտոր-Շարական (Macler, Թ. 81, 323)։

1429ին նոյն Բերիտոստուր նոյն վանքին մէջ, որ Կաթայի շատ մօտ է կ’ըսուի, ուրիշ Շարական մ’ալ գրած է (անգլ. 69)։

1430ին ի Կաթն, Սարգիս Ա. շատ շնչուցեց եւ Ս. Անտոն վանքը, որուն Առաջնորդն է, եւ Թադէոս Աբրամնց կրօնաւորը Հարանց վարք գրած է (ի վան. Նոս. 95)։

1432ին Բերիտոստուր կրօնաւոր օրինաւոր է Դերեքի Կաթայցոյ ղրտանաւորները “ի վանն որ յանուն Ս. Անտոնի, որ առնութիւն մեծի մայրաքաղաքի Կաթայի” (Հ. Ցաշեան, էջ 1016)։

1439ին Մաղաբիա Արեղայ կը գրէ Աւետարան, Տեր Մաղաբիա Եպ. ի օրով, ի Կաթն “ի մենաստանի մեծի սրբոյն Անտոնի եւ Աւետածանի” (ի Ղալաթ. Ս. Գր. Լուս. Նոս. 119—120, Բարգէն Ա. Կորոս, 119)։

Այս միջոցներուն Կիրակոս Ճգնաւոր Բէֆէէն Մեծոփայ վանքը տարած է Ղերդիշ օժման գիրքը, զոր թովմաս Մեծոփեցի († 1446) կը սրբագրէ, իր աշակերտ Բովժ. Սրկգ. Արճիշեցոյ ընդօրինակել կու տայ եւ կը հրատարակէր անոնք զայն ընդունին “իբրեւ զտախտան Թ. սէսի եւ զաւետարանն Բերիտոսի, եւ մի որ պախարակեաց զստ, զի ի վաղոց ժամանակն Նախախն կրէաք յաղագք Բերիտոնէից եւ այսօր Բերիտոս եւ զսա ի ձեռս մեր, եւ որ ոչ ընդունի զսա, ինքնին պատասխանեաց Բերիտոսի Աստուծոյ մերոյ” (Հ. Ցաշեան, էջ 277)։

1450. “Յամ Տեառն 1450 վերջի ըստացող Բրէվարիս եւ Ֆրայ Թադէոս Շահապունցի եկի ի Կաթայս ի Ս. Նիկոլ վանքս եւ

գրեցի զգիրքս (Ժամագիրք Անկիթոնեան) զայս ի լատինացոյց,» (Ի Լոնտոն, Br. M. Նոս. 164—5.)

Մինչև 1500 կաֆայի մեջ ուրիշ եպ. չի յիշուիր: 1495ին կը յիշուի Կարապետ Եպ. մը, որ չէ թէ կաֆայի, ինչպէս Ա. Ալպոյաճեան «Լեւոն» Աշենանէ՝ իբր պաշտօնաց յառաջ կը բերէ («Բիւլ.», 4408) այլ Կաֆանցի է, որ Պոլիս կը գտնուի եւ 1293ին գրուած Աւետարան մը կը նուիրէ Սամաթիոյ Ս. Գեորգ եկեղեցոյն: Ալպոյաճեան, որ կ'ուզէ այս խնդիրներով զբաղել, պէտք էր գիտնալ՝ որ այն յիշատակարանն արգեն Տրատարական է Կ. Յ. Պասմաճեան. («Եռադիկ», 1891, Ա. Տարի, թ. 25): «...Նուսնայ ծառայոց Ծառանոյ Կարապետ Եպ. Կաֆայցի... զտար Աւետարանս որ յիմ հալալ արգենաց գնեցի եւ զԱւետարանիչքն նկարել տուի, եւ նոր կապել տուի եւ զլրի յիշատակ իմ հոգոյս եւ իմ ծնողացն ի Ս. Գեորգ տաճարիս որ կօչի Սուլու Մանասար... ԹՎ. ԶԽԻԴ. (= 1495) Յուլիս թ. գրեցաւ յիշատակարանս, ձեռամբ Աստուածատուր Արեղայի Կաֆայեցոյ»:

Ասոր նման է, ինչպէս կ'երեւայ, 1696ին յիշուած Յովհ. Գեորգեան, Եպ. Կաֆանցի, որ նաեւ «Կաֆայի», կը նշանակուի: Ասոր մասին «Հանգիսեւ նախորդ թուին մեջ յիշածներէս զատ (էջ 285), կը յաւելում նաեւ հետեւեալ տեղեկութիւնները: Խաչատուր Վ. Էրզրումեցի, աշխկերտ Բորբաքանտայի եւ գլխաւոր ծառայող կաթողիկէութեան ի Պոլիս, 1696 Մարտ 4ին ի Պոլիս, Պէյօղլուի կաթողիկէ Լայոց տպարանին մեջ տպագրած է «Գիրք քերականութեան», թեպէս սասոր ճակատը գրուած է «Ներ տպարանում սրբոյ Էջմիածնի եւ սրբոյ Սարգսի զորավար... յԱրիֆոնայ քաղաքի», սակայն սոյն տպարանը հաստատած էր Էջմիածնի միաբան Երեմիա Վրդա՝ Յիսուսեան Երեմիայի հետ, ի Պէյօղլու: Ինք կը յիշուի 1706ին ընդգէտ կաթողիկէ Լայոց գրուած «մահասարկանի» մեջ իբրեւ «Աթմարմայից զլուսւոր» («Կուսկ», 1863, էջ 681: Տես նաեւ «Արեւել. Մամ», 1896, էջ 591): Ասիկայ էր Սարգիս Եպ. Սահէթճիի ընկերն, որուն կենսագրութիւնը՝ «Հանգիսի», նախորդ թուին մեջ հրատարակեցի, եւ նոյն անձն կ'երեւայ Եգիպտոսի Երեմիա Եպ.ին հետ: Արգ, յիշեալ քերականութեան վերջն (էջ 124) կը կարգանք, «Ես՝ Կաֆայի» Յովհաննէս, վարդապետս՝ տեառն Գեորգեան, բազմիցս ընթեր-

ցայ... վկայութեամբ հաստատեմ զվերոյգրեցեալս եւ մատնեաւ իմով կնքեմ: Գծագրեցի զատ: Յամի տեառն մերոյ ոտը. (= 1695)... յօգոստոսի ժե. Ի Կոստանդնուպոլիս Նաեւ՝ սրբագրութեամբ Յովհաննէս վարդապետի Կաֆայեցոյ», իրեն կնքը Դիսուսա՝ մընեղը՝ «ԾԱՆՈՐԸ»՝ «ԲԻՆԻ ԵՈՒՆ ԵՈՒՆԱՆՍ ՎՐԳ. ԿԱՔԱՅԻ ԹՎ. ՌՃԽԱ», որ է 1692, Եպիփոպոս ձեռնագրութեան տարին: Եպիփոպոս Էլալուն տարաւոյս չկայ, վասն զի ինք 1700ին ի Պոլիս ձեռնադրած է Միսիմար Աբրահամ աշխկերտ Հ. Գեորգ վարդապետ Աթմայցին: Եթէ վերոյիշեալ Կարապետ Եպ. Կաֆանցին բաւական ըլլար 1495ին քեֆեցիներուն ոչ-կաթողիկէ ըլլալն ապացուցանելու, ինչպէս կ'ուզէ հաստատել Ալպոյաճեան, այն ատեն սոյն Յովհաննէս Եպ.ն ալ բաւական պիտի ըլլար 1692ին քեֆեցի չլայնելու կաթողիկէ ըլլալն ապացուցանելու, գործնալ ըստ Ալպոյաճեանի:

Քեֆէի Լայեր 1433—1440 Եւգին. Գ. Բահանայապետին ի ֆիրմանց վասն միութեան ընդդէմ արեւելեան եկեղեցեաց գումարած ժողովին մասնակցած են: Որովհետեւ այս դէպքը Պոլսոյ Լայերու պատմութեան հետ սերտ կապ ունի, եւ քանի մը նոր գործերն անճիշդ են՝ «յարմարողական», տեղեկութիւններ գրած են, ինչպէս Օրմանեան Պարսիպը («Լուսն», 1910, թ. 5—6) եւ Ս. Ալպոյաճեան («Բիւլ.», 1911, թ. 4404, 5), կը ներուի անշուշտ, որ համառօտեմ պատմական մասը, միայն պատմութիւնը լուսաւորելու նպատակաւ:

1433ին Բասիլիայի ժողովոյ Լաբը միութեան հրաւեր ըրին ուրիշ արեւելեան ազգերու հետ՝ նաեւ Լայերու, եւ Լայոց Կոստանդին Ե. Պիղղիս.ին (1430—1439 Նոյ. Էն յառաջ Ժ) ուղղուած նամակը զրկելին ի Գ. Պոլիս, Եթ ՈՅ Ի Քեֆէ, Նսայի եւ Յովհ. հայ Աբեղապետներուն, որոնց առաջինը Ստամպոլի Լայոց Առաջնորդն էր, եւ երկրորդը Պիղղուական փոխանորդ Բիւզանդեան երկիրներու համար:

Այս թղթին բնագիրն երեւան ելած չէ. սակայն կայ յիշեալ երկու Եպ.ներուն 30 յեպտ. 1433ին Պալեստին առ Լաբս ժողովոյն Բասիլիայ գրած նամակը (Մանսի, ԼՎ. Ժ. Լու. Լ. 642), զոր լատիներէնէն կը թարգմանեմ: Ասոր մեջ յիշեալ Եպիփոպոսներ կը գրեն՝

Մենպատիկ Մենարեալ Լաբը, Տեաքը, բաւական շահամբարք եւ յարգիք. սերտեմ սիրեցեալք, որ Բասիլիա սուր ժողովքի գումարուած էր, յարգութիւն եւ մեծաբարք կը մատուցանեց:

Պէտք անկեան Բիւսուսի Բերիտասի վրայ զինուա-  
րեալ եւ հաստատուալ եկեղեցւոյ՝ նոյն ինքն Լեղիմանի  
զինքն մեր իւր ամենակալ զորութեամբը ինչպէս մեղի,  
նոյնպէս ձեզի առաջնորդ ըլլալ։ Եւ որ այս բարի գործն  
սխալ՝ ի կատար հանել։ Վասն զի ինչն Յեր Սեւեա-  
րանի մէջ բառաւ։ Սեւ ար երկու կողմ երեք անձինք իմ  
անուամբ գումարուած են, հոն եմ եւ այլ անոնք մէջ։  
Տեսե՛ք Լաւրը, մեղի, Յովհ. Եպ.՝ Կարգեալ՝ Տերն մեր  
կաթողիկոսն Պրոքոպ կողման բովանդակ Լայ եկեղեց-  
ւոյն, Սասուն քոյ լաւանգալ առաջ Եկեղեցւոյն՝ Լատինաց,  
Արեւելեայց, ի մանաւ որի Յունաց եւ Մեր միաբանու-  
թեան՝ խաղաղութեան եւ միութեան գործին վրայ խոր-  
հար ըր ըրինք այն պատգամաւորներուն հետ, զորոնք  
դուք զրկած էիք այս միութեան համար մեր Տիրոջ  
Հռոմայեցոյ կայսեր, գլխաւորաբար եւ նախ այս առաջ  
վանանքի համար, որպէս զի կայսրն իր գետցամենքը  
հոն դրին, եւ մեք ալ ձեր ժողովոյն խնդրանաց հե-  
տեւելով՝ մեր պատգամաւորներն առաջադ զրկենք  
առաջ Սիւնհոգոսին։ Բայց որովհետեւ առաջին երեք  
Սիւնհոգոսներու մէջ, այն է՝ Նիկիոյ, Եփեսոսի եւ  
կ. Պոլսոյ, պատաշխան տրուեցաւ՝ թէ այն ժողով-  
քներու վերջներն հաստատուն պահուին, մեք ալ հի-  
մայ մեր կաթողիկոսն ունենք, շատ անոնք եւ  
վրդները, որոնք առխախտ ենք գրեթէ յոսն Լայտաս-  
տայց եկեղեցւոյ վարդապետներուն վրայ։ այն պատ-  
ճառաւ գումարին է մեզի կատարելով պատասխան մը  
տալ։ Մասնաւոր որ մեր պատգամաւորներն այս նիւ-  
թին մասին լուսազոյն գտնեցին եւ խորհանք ձեր կող-  
մանէ, եւ ընդարձակագրին եւ մանաւոր թէ լրջու-  
թեամբ գրեցին առ մեր կաթողիկոսն, իմ վերջինեալ  
Եովհաննէսիս ձեռագր. ինչ որ հաջորդեալ է այս առաջ  
վանանքի համար, ինքի գրեցաւ եւ առ կաթողիկոսն  
ուղարկելու յանձնուած թղթին մէջ մի առ մի բովան-  
դակուած է։ Եւ եթէ ձեռքան գտնուած եւ երկարու-  
տեւ շղթայ, ինչէ պատեղապետներն անհարկ եղեա-  
ները եւ մեզ վանանքներ չըլլային, ձեր պատգամաւոր-  
ները կը յօժարէին անձամբ երթալ կաթողիկոսին։  
Այս պատճառաւ լաւ համարեցա՞ք զրեւ, եւ քիչ  
վատեցա՞ք։ եւ կը յուսանք որ մեր կաթողիկոսն իր  
կերպարանքներուն առ եպիսկոպոսներուն հետ հասու-  
քանութեամբ լաւ եւ լիւ է կատարանքի կաւ տալ, եւ  
իչպէս Բարձրաբալը կ'աղէ, այնպէս կ'ըլլայ։ Այսու  
հանգիսէ ցիտե՛ք, թէ մեր Լայ ազգը հաստատու  
եւ վստահ կը ինչոյ այն վարդապետութեան վրայ, որ հաս-  
տատուած է Սեղեքեոսոս Բաշանդապետէն եւ Գրի-  
գորէն Մեծէ՝ Եպիսկոպոսէն Լայտաստի, եւ քաղ  
իւնչանակութեան կատարանքներուն եւ Տրգաւան, որ այն  
ատեն վերորդեալ Լայոց մեծաց թագաւոր էր։ Գար-  
ձեալ այն ժամանակի Հռոմայ եկեղեցիէն պատուէր  
տրուեցաւ, որ Գահաւթեան խորհուրդը բազում հա-  
ցով եւ անպակ զինուով կատարենք, եւ ասոր ի հաստ  
տառութիւն, ի միանգիստ որ յիշատակ իրաց, խոր-  
հորդոյն անպակ զինելն խառնելով միշտն՝ դուռն  
ցաւ յիշեալ վարդապետութիւնը, վկայելով՝ թէ այ-  
սուհետեւ Սիւնհոգոս եւ Լայք եւ ամեն քրիստոնէւոյ ի  
Բերիտաս Երեսու ճղարդ ըլլան։ Այս ճմարտութեան  
մասին անինք հին ժամանակագրութիւններու մէջ  
Ս. Սկրիտաբոս Բաշանդապետին օրէն ստեղծել թէ  
իւնչարի խորհուրդ եւ խառնակութիւններ եղած են։ Բայց  
եւ այնպէս ինչ որ կաթողիկոսն իր եպիսկոպոսներով

եւ իմաստուններով կը գործադրէ եւ կը սահմանէ այս  
խնդրոյ մէջ, զոյն պիտի ընդունինք եւ պիտի նիւ-  
տանք վաւեր, հաստատուած եւ աներկայ։ Հաստատուած  
է մեզ միտին ժողովուրդ վասն զի գրեթէ մեր բոլոր  
ազգը բարդաբաններու զանազան երկիրներուն մէջ  
ցրուած է, Թաթարներու, Թուրքներու եւ անհատա-  
ներու մէջ, եւ գէշ այն է՝ որ հպատակ եւ հարկաւոր  
եղած է, ցաւ այն է՝ որ վերջինեալ պատճառներու հա-  
մար կարող չենք ծախսքը ընել, Բայց հա, որ ամե-  
նային բարբիւն է, եւ կարող ոչնչէ ինչ ստեղծել, եւ  
որով ամենայն ինչ եղաւ եւ կ'ըլլայ, զոյն՝ որ մեզ  
անկարելի կ'երեսայ կատարել, թող հաւաքու որ ընէ  
ամեն։

Տեսեալ... ի վերջն Սեպտ. 1433:

Չեր սիրելի որդիքն Եւայի եւ Եովհաննէս  
Եպ. Լայտաստանեաց եկեղեցւոյ են։

Այս նամակին մէջ մտադրութեան ար-  
ժանի է այն՝ որ Եովհաննէս բոլոր իրազանդեան  
երկիրներու եպիսկոպոսն է կաթողիկոսի կող-  
մանէ, իսկ Եւայի յատկապէս Պոլսոյ եպիսկո-  
պոս է, եւ այն՝ ոչ թէ Եւայովի կողման, որ  
այն ատեն Բիւզանդիայէն անկախ չեմոմական  
պետութիւն էր, այլ բուն Սասանյան, վասն զի  
այս եպիսկոպոսներ Բիւզանդիոյ Հռոմական  
կայսրն իրենց Տէրը եւ նկատեն։ Դարձեալ՝  
առնեք երկուքն ալ կաթողիկէ չէին, թէպէտ  
կաթողիկոսին որդման հպատակելու պատրաստ.  
Եւայեայ 1 Դոյ. 1434ին առ Բաշանդապետան  
գրած նամակէն կ'իմացուին, որ կաթողիկոսին  
որոմագրութիւնները տեսնելով՝ իրենք ալ  
աւելի ջերմ կուսակից եղած են միութեան։

Եւայովի կողման Լայսերուն վրայ յիշա-  
տակութիւն չէալ ունաւ. վասն զի անոնք Քէթէի  
հետ կապուած էին քաղաքականութեան։

Եւայի ընդունելով Եպ. Գ. Ի առ կաթո-  
ղիկոսն գրած նամակը, իր Արքեպիսկոպոսն  
գին ձեռք զրկեց ի Սիւս։

Այս միջոցին Եպ. Գ. Բաշանդապետն  
Սիւնհոգոսը Ֆերբար փոխադրել տուաւ, եւ  
1434ին հրաւիրեցաւ համաժողովոյ մը զրեւ  
Պոլիս, որպէս զի Սայի Եպ. ին ձեռք զրկուի  
Լայոց կաթողիկոսին։ Եւայի 1 Դոյ. 1434ին  
Բաշանդապետին կը պատասխանէ հետեւեալ  
կերպով.

Ամենաաւելի եւ Ամենբարձիկ Տեսած մերո՞՞  
Տեսած Եւգրենայ Բաշանդապետի։

Ամենբարձիկ ի Բերիտաս Լայս եւ ամենաւելի  
Տէր, արժանաւ որ եւ խոնարհ մեծարանք կը մատու-  
նորժանու որ համարք Երանութեան տոնցը։ Չեր  
Արեւելեան համաժողովոյ մը Լայոց ազգին Հռոմայ  
Եկեղեցւոյ հասարակաց ամենեւեւ Սոր հետ ամենա-  
աւելի միութեան մասին եւ քիչ, որ եկեղեցւոյ առաջ  
Ամենին Աստուծոյ հրամանով Չեր Երանութեան



Աւագ պարն Պաթիֆօլ, Պարն խոյ թարակալ, (Կա-  
րսթիւն Գախալ, Պարսա՝ Ճրագեան (Candelarius),  
խաճա Եւս. աւգ. վաճառական Ամբ. պէ Ս. Փրոնիկե-  
ոսի, Անդրեան Կարպեան, Գորզ. պէ, Սարգ. պէ,  
Թաւալ. պէ Սա՝ զա, Էնթ. պէ Արեան, և Արե-  
ան Սարթագործ (Peliparius), Ժարանեան Տե-  
սեւալ մարտնութեան ընդ մեծարդ և ագնական  
Տեառն Պոզոսի Իմերիակի, մեծարդ Լի. պատմի Կա-  
ֆայի, ինչպէս նաև ընդ ագնական Տեառն Լուչիո  
սէ Ֆաջիո, և ընդ ագնական Տեառն Կալեոյ սէ  
Կրիստի գործակալաց և հազարաւուսաց Կաֆայի:  
Այսինքն Ի վաղուց խոստացոյ առ էր իրենց որ չէ-  
նալ կամ առ Ամենաուրբ Տէրն՝ Տէրն մը Բաշա-  
նայպետ և կամ առ Սինեդոնս պաշտամուր մը  
զրկել, իրեն գետակ անկող, յոգուս ամենայն քրի-  
ստեանց: Կը խնդրեն՝ որ նոյն մեծարդ Տէր Լի. պատմ  
յարջէ իրենց երեք ամիս միջոց, որպէս իր հարեան  
իրենց պաշտամուրը զրկել, իրենց Կաթողիկոսին՝ անոր  
հաւանութիւնն առնելու համար:

Մեծարդ Տէր Լի. պատմ հաւանեցաւ և կը  
հաւանի առ իրեն ինչքան ժամանակամիջոց, պա-  
սանաւ որ եթէ ինչն Սրբազան Կաթողիկոսը միժէ  
իրենց ինչքանը զրկել կամ թոյլ տալ, և կամ եթէ  
յիշեալ պաշտամուրն երէր ամիս մը՝ վերագառնայ  
Սրբազան Կաթողիկոսին, այն առնել յանձն կ'առնան,  
կը պարտաւորին և կը հաւանին, ոչնչ պարագային  
հակառակ՝ զրկել առ Ամենաուրբ Տէրն մը Բաշա-  
նայպետ կամ ի չնման և կամ առ Սինեդոնս,  
ինչպէս որ պաշտամ կ'երեւայ յիշեալ Լի. պատմի, վա-  
րպետա մը՝ ընդարձակ իշխանութեամբ, լայն և ընդ-  
հարձակն խոստանալ, որ պիտի վնասէն տար և առ  
աւելորդութեան ինչ մասը որ կ'ընէ, և առն Քառ-  
նեքը՝ զոր կընայ առնեալ իր աւելորդութեան հետ եր-  
թայու և դաւանայաւ առնել, և Տիմակընէ կ'ընտրեն  
և ընտրուած նկատել կ'ուզեն նոյն վարպետը՝ իր-  
եւ իրաւունքն ու ննջող երեք ամեան ժամ: Իրենց պա-  
շտամարտութեան և գետակութեան ի վերջորեալ  
գործ՝ ի և ընդհանուր գործակալութեամբ ըստ վերը-  
գրեցին: Եւ այնքան նոյն արձանագրութեան զօրութեամբ  
չի հասկըցուիր աւելորդ նախակ մը կամ զաւագամուր  
մը որոշում մ'ընդգտելով՝ բայց իրեն համաձայնելով  
յիշեալ վարպետութեան հետ, նոյն իսկ իրենցմէ Կա-  
րպեան մէկը:

Գրեցաւ ի մեծի սենեկի նարին Տեառն Լի. պա-  
տմի, յ. ամիս 1438, ի 16 ինդիկանի յընթաց Եւս-  
նուարի, Բշ. իրիկուան գէմ, 18 Մայիս:  
Վկայք Թինեոսառ մէ Գործնագո, Լափրանց սէ  
Լորգո, Բրիտափոս սէ Օտիոն, որ կոչուեցան և  
խնդրեցան:

1438 Նոյ. 16. Ընդօրինակուած որպէս ի վերոյ,  
Բարթիմիէոս Կրէրի նոսարի հրապարակական արձա-  
նագրեն, որ այժմ գրեանագիր է յիշեալ մեծարդ  
Տեառն Պոզոսի Իմերիակի Լի. պատմի, և այժմ ի հրա-  
մանէ նոյն յիշեալ մեծարդ Տեառն Լի. պատմի:

Գրիգոր սէ Պենեկափո, նոսար և գրա-  
նագիր:

Րոտտիք, և Ի Լուսնայ, Իա՝ Թաղ-Գաթ ըստ հին արեւմտեան  
հայ ընտանիք մը, Ղրիմն եկած, որուն սերունդն այսօր աշ-  
քատացած է:

1438, Գշ. 13 Մայ, իրիկուան մեծ ի Պատշաճ  
Ստորագրեցաւ, որ բաշակոյ ըլն, կը հաստա-  
տեն այն ամէնը, ինչ որ վերոյիշեալք ըլն:

Ես Տիրմ. Պարալ  
Ես Յովհ. որք Պարալի  
Ես Գաղ. պէ Մարգար Բարքանա  
Ես Պարսկաբը Ճրագարար (Candelarius)  
Ես Պարսկաբը Պաշալ  
Ես Սահակ Պաշ. Բուրմի  
Ես Ալեք. պէ Գաֆար  
Ես Ստեփ. որք Չաքարիա երկոյ  
Ես Քայհարեա Բուրմի.  
Ես Անաէլ Ս. Երրորդութեան Բարքանա (քա-  
նայն):

Ես Սինն Բարքանա Ս. Ստեփանոս  
Խաչիկ երեք եկեղեցւոյ Հայոց:

Վկայք՝ Սիւրբի Մարտիրոս, և Լի. պա-  
տմ. սէ Բերեղոսեան, կոչեցեալ և ինչքեալ առ  
այս:

1438 Նոյ. 16. Հանեալ. ինչպէս վերը, յիշեալ  
հրապարակական արձանագրեն Բարթիմ. նոսարի ի մեծ  
իմ վերագրեալ Գրիգոր նոսարի և գրեանագրի  
ստորագրեցի. և այժմ ի հրամանէ վերոյիշեալ մեծա-  
րդ Տեառն Լի. պատմ:

Գրիգոր սէ Պենեկափո, նոսար և գրա-  
նագիր:

Բէժեցի Լայսին իրենց այս նամակը, Բա-  
հանայապետական նախարաներու նամակն և  
Ե. Գ. Գ. ի հրաւիրագիրը զրկեցին Սասանյոյ  
նստող Կաթողիկոսական փոխնարգ Եովհաննէս  
Եպ. ի ձեռքը Սիւս Կատանդին Կաթողիկոսին:  
Կաթողիկոսն իսկոյն պատասխանեց իրենց հե-  
տեւեալը (Լատին լորգ. Ի Ֆիրերեցա Մեա-  
Լաւ. Մարգր.)

Կատանդին մտայ ժառանգ Տեառն մերց Եւս-  
նուսի Քրիտոսի. որպէս իմեմ վարպետի, ժող-  
վարեան և կրօնի Հայոց ի կաթա:

Առաւել ընդհացը Վարդապետա կաթողի-  
կոս կարգուած ըլլալով այս Թաղուս կը գրեմ կաթա  
հայկապ քաղաքից, որ հանութիւն կը զրկեմ կաթա  
ընակալ բաժնեգոյ ժողովրդեան: Հաւատարմը՝ որ  
գրեաներու, պարտանք մը կը գրեմ ձեզ, այն է Սու-  
րիս Վ. որքեկի՝ որ ի կաթա իմ ամէն ամիս կը  
նստի, Առաքանիս որպէս Արքեպիսկոպոսին, և  
ամենայն արարեան քահանայից՝ Ստեփ. ի, Մովսիսի և  
միւս ամենուն, և Կաթայի ագնական քաղաքացիներ-  
ուն, այսինքն՝ Ամբ. պէ, Թաւալ. պէ, Խաչիկ, Խիբր.  
պէ, Օւլ. պէ, Արաթի, Անդրէ և այլ ամ-  
նայն քաղաքացեաց. Հոգւոյն Սրբոյ զօրութեամբ կը  
գրեմ՝ այս նամակն տալով ձեզ արճաութիւն և աշ-  
խոյ: Օրհնութիւն Ս. Եւսիպ. և Ս. Գրիգորի ձեր վրան  
ըլլայ մը սուրբ Աթոռն: Առաւել աղաւթ իւր որդե-  
րութեամբ ընկը ստանալիս ամեն փորձութիւններէն,  
Թէ հոգեւարներէն և Թէ ժամանակաւորներէն, Առ-  
աւել քաղաքացեաց ձեր որդեան, դատելքն ու սոս-  
ցուածքը: Գրեմք զուգ, ամենախիտին զաւակներու, այս  
ինքն՝ Սարգիս Վ. և գաղք քահանայ և քաղաքացի  
Յիւր, որ Եովհ. Եպ. եկաւ մեզի և բերաւ ձեր նամակն

կաթոյն, ինչպէս նաեւ ծայրագոյն Քահանայապետին փոխանորդին եւ Տեսան Հիւպատոսի նամակները: Կարգացնել եւ ուղարկելու, վրան զի գրեցիք Հռոմէ ինքնուրուշ Տես միութեան վրայ: Երբ զայս լսեցի՝ Առաւել շուրհակալ եղաւ, Հոգւոյն Սրբոյ շուրհակ է, որ այս գործին սկիզբն եղաւ: Պարտաւարտաւճ է որ քրիստոնեայք միութիւն եւ միաբանութիւն ունենան: Եւ մարմ կապաւոր իշխանութեամբ՝ կարգեցի որ Սարգիս Վ., որ է եւս պիտի ըլլայ փոխանակ իմ աւանդին: Եւ Սարգիս Վ. եւ թովկիմ Վ. եւ Եովակիմ լւ. Հայկոյն, երթան ի Սիւնհոգ, Հոգին Սուրբ լուստաւ ըլլայ իրենց, եւ Հոգւոյն Սրբոյ շուրհակամբ ինչպէս որ Ս. Սրբաւորացի եւ Ս. Գրիգոր եղան միաբան, նշնակեալ Առաւել միաբանէ զինչ ի խաղաղութեան, ի ռէր եւ ի միութեան. ինչպէս Առաւելագիտանոս ինքնաւալ եւ Տրդատ ինքնակալ մեր իւրաք Հնա միաբանութիւն եւ գոյնը ունեցան, նշնակեալ եւ Գաբ Տաստատեցէր անոնց գործն ի միութեան, եւ Մենք նոյն ինքնակալաց գործին իր միա, յը, չհնայալ Ս. Հոգին ինչ կորովով որ լուստաւոր Ս. Սիւնհոգը, պարտաւոր եմք անոր Հրատարակել:

Գրեալ 25 Թուոյն, յամին 1438, (H. Justinus, Acta S. Oe. Conc. Florent. Roma 1638, էջ 348—9.)

Նշնակեալ Բէֆէի Պօղոս Հիւպատոսին գրեց Տեսեալը:

Հոգւոյն որդւոյ՝ Տեսան Պօղոսի իմերեքաւի Հիւպատոս Կաթոյն, Առաւելին ծառայ ծառայելոց Առաւելոյ Տեսան մարդ Յիսուսի Բերտուսի, յորդանոց՝ պատուով եւ բարեխոսութեամբ, Կաթոնիմ Վաղարշապատ: Եւ իր գործն այս թուգթն օրհնեալ քաղաքից, աստուածապաշտ մեծօրհնելով՝ արքայական եւ մայրաքաղաք Կաթոյն, Տեսանայով ի Բերտուս եւ սիրելով մեր Տեսաբն ինչպէս մեր հոգին, ցանկալով փառաւորութիւն իմ աւանական որդւոյ՝ Տեսան Պօղոսի իմերեքաւի Հիւպատոս, փոխանորդի, Հոգաբարձուց եւ պլլոց Տեսանց: Չեւ առաւելութիւնը հայեցելով՝ իր հայեցմէ Առաւելոյն է ի Ս. Գրիգորէ, որ պահէր զինչ ի խաղաղութեան, պահէ մինչեւ ցլփանան ամեն, Զորութեամբ Հոգւոյն Սրբոյ իր յոյժ մեղ օրհնութիւն եւ ողջոյն օրհնութեամբ Առաւելոյ, Կառ տամ ձեզի օրհնութիւն յԱլլոյն Ս. Գրիգորի այս օրհնակ Անտուան: Եւ ինչպէս հոգը ընդունեցան իրենց խնդրած, նշնակեալ Առաւել մարդ ձեզ ընդունել մեր խնդրածը, եւ օրհնութեամբ Սրբոյ Հայոց Առաւելոս աղաւ զինչ յամենայն փորձանայ աստանայի եւ անցնել մեր տունն, որդիքն, քանիքն եւ ստացունածն: Կը ծանուցանեմ ձեզի, մեծօրհնելու Տէր Հիւպատոս, որ ձեզ իրական շամով մը ներկայացուցեալ մեր՝ Կաթոյն իշխանաւոր անհաւարութեանց հաւանութեան մասին: Մենք զայն կարգացնել եւ ցնծացնել եւ օրհնեցնել զինչ: Առաւելոս օրհնէ զինչ եւ մեր թագաւորութիւնը: Առաւելոս զորացնել զինչ մեր հոգին եւ զանիւրեմ զեմ եւ մեր սուրբ հաստա ըլլայ, Գարձեալ իր ծանուցանեմ ձեզ, Տէր Հիւպատոս, եւ այլ խորհրդականաց, որ մեր մեր լիակատար իշխանութեամբ՝ մեր անին իբր փոխանորդ կարգեցիք իմ որդիս Սարգիս Վ., Թովկիմ Վ., Եովակիմ Եւ. Հայկոյն, որ երթան այն օրհնեալ Սիւնհոգը, եւ ինչ որ Ս. Հոգին պիտի լուս-

տաւոր անոնց միջոց, այնպէս թող գործեն, որպէս զի երբ, եւ միութիւն եւ եղարկութիւն ըլլայ ի մէջ քրիստոնէից: Առաւել օրհնութիւնն ըլլայ մեր վրայ, Գրեալ թուգթն 25 Թուոյն 1438:

Կաթոնիկոսին այն երկու թղթերը վերոյիշեալ Գրիգոր աէ Պէնեկապոս Պատարին ձեռք զաւերացուած են, որուն մէջ կ'ընէ՝ թէ այս նամակները հայերենէ լատիներէն թարգմանեց Գրիգորիկոսն ֆրա թովկիմ, Բէֆէի Ս. Սարգիս եկեղեցւոյ սենեակը, ի ներկայութեան Քահանայապետական նուիրակաց՝ յիշեալ Սարգիս Վ. Կաթոնիկոսական փոխանորդին, եւ Անդրանիկան (Մարաքիս) հայ Արքեպիս, որոնք վկայեցին եւ հաստատեցին թարգմանութիւնը:

Բէֆէի հիւպատոսը Պօղոս իմերեքաւի 1 Գրեալ. 1438 թուականով նամակ մը գրած է Եւգ. Գ.ին, որուն մէջ կ'ընէ՝ թէ այս Հայ տաղը միութեան լիբերալ Տեսմար թեպէս Հաստատուի փորձեր եղան, սակայն ինքն համբերութեամբ սպասել աւելի պատշաճ տեսած էր, իսկ չհնայ տեսնելով Քահանայապետին այնպիսի յօտարութիւնն ի միութեան քրիստոնէից, ձեռնարկեց վստաւիկէ Հայերը, որ եւ իւր յուսարցածն շատ աւելի զիւրութեամբ յալողեցաւ, եւ ի մտնաւորի Հայոց այս միութիւնն իրեն համար ամենն մեծ երջանկութիւնն է, Կը ծանուցանէ՝ որ Հայոց պատգամաւորութիւնն իրենց Կաթոնիկոսին կողմանէ կու գայ յանուն ըովանդակ ազգին եւ լիւրի իշխանութեամբ: Պատգամաւորութեան առաւելորդ պիտի ըլլայ Քահանայապետին փոխանորդն ֆրա Թակոր, որ այս միութեան գլխաւոր լուստաւոր եւ օգնական եղաւ, եւ Հայերու սիրուն բողոքովն անոր ձեռքն է, այնպէս որ առանց անոր չեն կարող քահանայապետին ներկայանալ, (Just. anag, էջ 349—50):

Կաթոնիկոսին պատգամաւորները 1438 Գրեալ.ին Պօղիս եկան Բուռնաց Կայսեր հետ ֆիրմանցաւ երթալու, սակայն Կայսրն արգէն մեկնած էր: Պատգամաւորք անոր հետեւեցան. երբ Վենետիկ հասան, հանգիպեցան Կայսրի՝ որ իր վերապատար Սիւնհոգին, որ եւ վերեւը յորդորեց ընդունել ինչ որ ինքն ալ ընդունած է: Պատգամաւորք ֆիրմանցաւ հասան երբ արգէն Սիւնհոգը վերջացած էր, սակայն Եւգ. Գ. գումարեց ներկայ տողովականքն, որոնք մէջ հայ Ներսէս Վ. ոմն եւ թերեւս այն երկու հայ եպիսկոպոսներն ալ, որոնք բուն Սիւնհոգոսի ներկայից մէջ իր յիշումն իբրեւ ներկայացուցիչ Կաթոնիկոսի: Կաթոնիկոսին պատգամաւորներն այս գումարման մէջ Հռոմայ եկեղեցիէն



արդեն միայն 5—6 կետերու մէջ տարբերող վարդապետութիւններու վրայ բանակցութիւններ կատարեցին, եւ ընդունեցան Սիւնհոդին վարդապետութիւնները, Սարգիս Վ. եւ Թովմաս Վ. Կաթողիկոսին կողմանէ ստորագրեցին որոշմանց եւ Եւգ. Գ. Քահանայապետին հրովարտակին, զոր լատին Բաթրեղ Վ. Տայերէնի թարգմանած էր, եւ 22 Նոյ. 1439ին նոյն դաւանութիւնը սուրբ հրապարակաւ Եւգ. Գ. ի առնէւ:

Քահանայապետը թէ Կաթողիկոսին եւ թէ Քեֆէի Կաթողիկէից յատուկ հրովարտակ գրեց 15 Դեկտ. 1439 թուականաւ եւ պատգամաւորներն ընծաներով եւ պատուով արձակեց: Քեֆէի հրովարտակին մէջ կը հրամայէ Քահանայապետն՝ որ ոչ ոք արգելք չլլայ Հայոց իրենց արարողութիւններուն համեմատ վարձուելու, եւ կը դատապարտէ այն մէկ քանի լատին քահանաները, որոնք այնչափ տգիտութիւն ցոյց կուտան՝ երբ կը յանդգնին հակառակ կանոնաց Հոռնէական եկեղեցւոյ, սլաւոն կամ հայ քրիստոնեայ մը կրկին մկրտել, երբ ասոնք Կաթողիկէ եկեղեցւոյ միութեան հոս գան:

Երբ ասոնք վերադարձան 1440ին սկիզբը, հոստանդին Կաթողիկոս վախճանած էր (1439 Նոյ. 15 յառաջ), եւ Գր. Մուսաբէգեանց Սոյ Կաթողիկոս գրուած: Իսկ Հայաստանի վարդապետները տեսներով հոստ. Կաթոլիկն ի միութիւն դիմումը, սոսոր յաջորդ Գրիգորի Կաթողիկոսութեան երկրորդ տարին՝ 1441ին Էջմիածին ժողովք գումարեցին եւ Գրիգոր Վերապեցին Կաթողիկոս ընտրեցին, Աթոռն Էջմիածին հաստատելով:

Քեֆէի մէջ այս Կաթողիկէ միութիւնը բաւական ատեն մնացած է: Զամեան (էջ 484) կը գրէ՝ որ Սարգիս Աթոռակալ Վ. համոզեց յիշեալ Սիւնհոդին ուղղութեան նոյն իսկ Մկրտիչ Նաղաշ Եպ. Նվմիս, որ կը հակառակէր ֆորոնցայի ժողովոյն մանակեցեալ՝ երբ հոստ. Կաթոլ. Կ'ուզէր զնոյն իր իր ներկայացուցիչը լրկել, եւ փոխանակ անոր՝ Քեֆէի Կաթողիկոսական փոխանորդն ու Ս. Անտոն վանքին Առաջնորդը Սարգիս Վ. որոշեց, Վրեւիքէն ալ Հայէպի Առաջնորդ Բովակիմ Եպ. լրկեց, որ հաւանաբար Կաթողիկոսին նամակներն ալ տաւրած է:

Անծանօթ է ցայտար, թէ Կաթողիկոսին պատգամաւորները Կաթողիկոսին ուղղուած թուղթն Երբ եւ ինչպէս հասցուցին անոր ձեռքը: Այս ստորդ է՝ որ անոր ազդեցութիւնն ի Հայս

ընաւ չի յիշատակուիր, եւ այս պարագայն այլեւայլ մեկնութիւններու տեղի տուած է: Ըստ Զամեանի Գր. Մուսաբէգեան վախճանած է 1447ին եւ ինքն եւ յաջորդները բնաւ հաւանած չեն Սոյ Աթոռոյն փոխադրութեան: Օրմանեան Պարթ. "Լումայի" (1910, Թ. 7—10) մէջ ուզած է ցոյց տալ որ Գր. Մուսաբէգեանց աթոռոյ փոխադրութեան հաւանած է, եւ 1444ին մեռնելով, նոյն Աթոռն ինքնին գաւրած է: Նոյնպէս Կ. Պոլսոյ Հիւանդանոցի 1908ի Օրացուցին մէջ հրատարակուած է Գաւաղանագիրք մը (էջ 170—186), որուն հեղինակութիւնը "բարձրաստիճան եկեղեցականի մը" կը տրուէր: Ասոր մէջ կ'ըսուի թէ Գր. Մուսաբէգեանց տարի մ'ետքը հաւանած է փոխադրութեան, եւ 1442ին վախճանած, որով Սոյ Կաթողիկոսութիւնը դադրեցաւ: Հազիւ հինգ տարի ետքը Կարապետ Եպ. Եւգրիկոսի՝ Էջմիածին Եպ. ձեռնադրեալ, գնաց Սիս ինքնագլուխ՝ եւ Սոյ մէջ Կաթողիկոս (հակառակութիւն) նստաւ, որուն յաջորդեցին այլք: Ա. Ա. Ալպոյաճեան վաւերացուց զայս՝ նոյն տեղ գրած "Թեմագրութեան" մէջ (էջ 265—354), եւ եթէ չեմ սխալուիր այս առաջին կը շարունակուի, եւ կ'ըստ պաշտօնական Գաւաղանագիրք Հայոց՝ Ասիկոյ բոլորովին նոր "Սարմարուական", գրութիւն մին էր, որ պէտք էր պատմական վկայութիւններով հաստատուիլ, եւ սակայն ամենեւին վկայութիւն մը յառաջ չբերեցաւ: Այսպէս կը շինուի "Պատմագրութեան", Կ. Պոլսոյ մէջ:

Սակայն դիտել է՝ որ ձիւղ է թէ Կարապետ Վ. 1447ին Եգիպտոս գնաց նուերներով եւ հրովարտակ առաւ Տաշիր Սուլթանէն, վառն զի Եգիպտոսի Սուլթանին իշխանութեան տակ էր Կիլիկիա: Եւ այսպէս, Սոյ Կաթողիկոսութիւնը ձեռք բերաւ ("սեփականեաց զսուրբ աթոռս Կիլիկեացոյ"), եկաւ Սիս, իր աթոռն հաստատեց Ս. Պոլսոյ վանքն՝ Սոյ հաւաքակողմն "ընդ հովանեաւ Վանկոյ սուրբ Նշանիս եւ սուրբ աշնն Գրիգորի մեր Լուսաւորչին" (Հ. Վիշնէ, Հայապատմութիւն, էջ 575, ուր "25, տարի խափանուած էր, պէտք է "5, տարի ուղղէ. Նստ. 157): Եւ սակայն Գր. Մուսաբէգեանց, որ արգէն 7 Նոյ. 1439ին իրեն Կաթողիկոս Սոյ իր յիշուի (Նստ. 119, 120), հակառակ վերջիշեալ Գաւաղանագրքին ինքնակամ որոշման 1442ին չվախճանեցաւ: 1444ին ի Խարբերդ գրուած Յայամաւորքի յիշատակարանին մէջ կը կարդանք. "ի հայրապետութեան Տէր Գրիգորի ի Կիլիկիա (Նախ

գրուած) եւ Տէր Կիրակոսի ի Վազարշապատո (Maolier, անգ. էջ 101, Թիւ 181), որ ամենեւեւ կասկածի տեղի չի տար՝ երկուքը զատ զատ յիշելով։ Աւելի մտադրութեան արժանի է նամակ մը՝ որուն առաջին մասը պատասխանն է Գիրտնցայի խորովէն ետեւ՝ չայ պատգամաւորաց առ Կաթողիկոսն տարած Քահանայապետական նամակին, իսկ շարունակութիւնը պատասխանն է երկրորդ նամակի մը՝ Եւգ. Գ. ի յաւրդը Նիկող. Ե. ի գրած նամակին։ Նամակն Տեղեկանքն է Գր. Կթոյ. Մուսաբեգեանց, կը գրէ 1450ին ի Գահիրէ, ուր գացած է իր կաթողիկոսութեան վերաբերեալ ինքիւնեցուն համար. ինք զինք կ'անուանէ «Կաթողիկոս Նաժմորէն ամենայն զաւառացի եւ եպիսկոպոս եպիսկոպոսաց երկուց Հայաստան աշխարհաց, (Կիրիկոյ եւ բուն Հայաստանի)։ Գր. Մուսաբեգեանց գիտակից է Քեֆէցեոց եւ Կոստ. Կթոյ ի մէջ կատարուած սինհոդական գործոց, եւ կը յայտարարէ թէ ինքն հաւան է Սինհոդոսի որդեմանց։ Այս նամակին լատին թարգմանութիւնը նոյնպէս Գիրտնցա Մեախէն-Լաւրենտեան մատենադարանը պահուած է, Սինհոդոսին վերաբերեալ վաւերագրներու հետ։

Ահաւաստի աշխարհաբար թարգմանութիւնը.

Գրեգոր, ծառայ ծառային Եփեսոսի Գրիգորի Առաւելոյ միայ, անոր շնորհքն աւարտութեամբը Կաթողիկոս համբերն ամենայն զաւառացի եւ Եպիսկոպոս եպիսկոպոսաց երկու Հայաստան աշխարհաց, Տեսան օրհնութիւնը կը գէ տեսնուի։ Օրհնէ Տէր եւ պահէ փառաւորացոյն եւ Տրորացոյն Հովնին, որոյ Հորն Եւգենոյ Քահանայապետի եւ անոր աւանդութեանքուն պաշտօնեանքուն եւ աղետականներուն ամենաուրբ եւ օրհնուր Աթոռը։ Այդ կը ինքրեմ ի Տեսանն եւ Ս. Գր. Լուսաւորէ, որ զՔեզ ի խաղաղութեան պահէ, որ կնայէ, իւրանի շայն, եւ կնայէ յաւելոյթ ծերութեան, ի վերայ ծորը Աթոռայ առաջնոցն Պետրոսի եւ Պղոսի, որոց ի յիշատակ՝ յաւրդ գրուած է։

Քու Սրբութիւնդ գիտայ՝ որ Քու նամակիդ բարձրագոյն խորհրդ Մերն հասան, որոնք լուսաւորեալ արեգակն եւ աստեղաց եւ պայծառ երկնից նման են, եւ իբրեւ օսիկ անգին՝ բխած անաղատ հպիւծ եւ մարէ։ Հայր սուրբ. չմայ զՔեզ կը տեսնեմ ճշմարտութեան գերազոյն Հովնիւր եւ Աւանորդ կաթողիկոսն ըստ Բոստանի հարցն առաւելոց։ Իսկ եւ կը խոստովանեմ զերբորդութիւն, մի Առաւած, Հայր եւ Որդի եւ Սուրբ Հոգին ճշմարտութեան։ Իմ հպեւոր որդեք Սարգիս եւ Թովմատ Վարդապետը Քեզի եկան՝ ներկայացնելով իմ անուն։ Ինչ որ Քեզի հետ գործեցին եւ խոսեցան, ինչ որ Քու Բարձրութենէդ սահմանեցաւ, յօժարակամ կ'ընդունեմ։ Կուգի վարդապետ

պետներն եւ Եպիսկոպոսներն շատր Գեղի զքեզ, բայց անհասանելու ժամէն չիցոյց կատարել, բայ ի յիշեալ երկուքն, ինչ որ անոց հետ սահմանեցիր, զբնաւորած կ'ընդունեմ։

Գարձեալ Քու Սրբութիւնդ գիտայ, թէ եկաւ հասաւ մեզ ի Գահիրէ, եւր Սուլթանին եկած էր, Քու պատգամաւորդ Գրաւ Ալկեբը, Առաւելոյ սուրբ եւ խմաստան քարոզիչը։ Անկող բերու իննի Քու թուղթդ, զոր Երուսաղէմ Մարտիրոս Եպ. ին զգիր կ'էր, Հրամայեցաւ որ զայն մեր առէն կարգան, եւ ի փոխառնք ինչ որ գրուած էր, պարհէն թէ սրբի եւ Քուստան սուրբ Սինհոդո վերջացած է, եւ եւ՝ որ ըստը եպիսկոպոսներու եւ վարդապետներու վրայ, նաեւ Երուսաղէմացոց վրայ անբաժանաբար Կաթողիկոս կարգուած եմ, եւր այս ամէնը լեցից. ճեմացայ յայտ, գահաժութիւն եւ փառք առաւել մեր Քեզմով գործեց զաստեղ ի պարծանս անաւոր, որ բնու մուսայմար զիտի շնորհէ։

Գրեցաւ Ռովմի Հայր Թուին (= 1450) Ակաւ. ին։

Գիրտնցա պահուած քնագիրը պէտք է ընենք, հասկնալու համար, որ արգեգը սոյն նամակին առաջին մասը նախորդ նամակ մըն է, թէ երկրորդ ալ 1450ին գրուած։ (Տես այս ամէնը զաւռ. էջ 80 եւ շննկ.)

Ամրոտիւնով ժամանակակից պատմութենէ յառաջ բերուած այս տեղեկութիւնները մեր նիւթի մասին, հետեւեալ եղականացութիւնները կարելի է հանել.

1. Քեֆէի Հայերն, ամբողջ ժողովուրդն ու երեմիա Եպիսկոպոսը, 1318էն յառաջ Հռոմայ Եկեղեցւոյ հետ միացած են ի հաւատաւ։ Այս միութիւնը տեսած է ստոյգ մինչեւ 1410 մերձաւորապէս, որ միջոցին Հայ կաթողիկէ ունիթոս Եպիսկոպոսներ Քեֆէի Հայ Աթոռը նստած են յաւրդաբար։

2. Քեֆէի Հայեր՝ որ 1438էն բաւական յառաջ արդէն խզած էին Հռոմայ հետ կրօնական յարաբերութիւնը, նոյն եւ յաւրդառաւին Գիրտնցայի Սինհոդոսին մէջ դարձեալ միացան Հռոմայ Եկեղեցւոյ հետ՝ ինքն եւ կաթողիկոսին ներկայացուցին ձեռք, որ էր Քեֆէի ճննովական իշխանութեան մէջ Կաթողիկոսական փոխանորդ, եւ Քեֆէի մօտ Ս. Աւտոն վանքին վանաշայր Սարգիս Վ. թէ այս վիճակն որչափ անաւան է, ծանօթ չէ։

3. Ստամպոլի Հայերը, որոնց Եպիսկոպոսն էր Եսայի, եւ բիւզանդեան երկիրներու Կաթողիկոսական փոխանորդ Յովհաննէս Եպ., 1434ին Հռոմայ հետ յարաբերութիւն չուներին, սակայն ասոնց թղթերէն կ'իմացուի թէ սիրայօժար կը բաղան Հռոմայ հետ միանալ ի

հաւատաւ Թէ այս կատարուած է, ինչ չափով, կամ բնաւ ոչ, պատմութենէ ծանօթ չէ:

4. Ամբողջ այն կենսական խնդրոյն մէջ, երբ Ստամպոլ եւ Բէֆէ շատ վաղ գործունէութեան մէջ են, բնաւ չեն յիշուիր այն Հայերը՝ որ կը գտնուէին Ղալաթիա, չեն յիշուական անկախ կատարութեան տակ, Ղալաթիոյ մէջ այն տանն անոնց ունեցած մեծ դիրքը տարակուսի տակ չի կրնար գրուիլ. վասն զի ասոնք՝ 1436ին իրենց Ս. Գր. Լուսաւորիչ եկեղեցին կը վերաւնեննել եւ մեծցնեն, եւ 1453ի պատերազմներու եր մասնակցին, ինչպէս Բէֆէի մէջ ալ իրենց առանձին բերքն ու բանակն ունեցած են, եւ կարելի չէր որ Եւֆ. Դ.ի եւ Բէֆէի Հիւպատոսին ուշադրութենէն վրիպէին: Քանի որ այս մասին հակառակ վկայութիւն չկայ, բաւաւոր է՝ իբր ստոյգ նկատել, որ ասոնք կաթողիկէն են եւ մասնակցութեան տեղի չկար:

Եւ արդէն Ղալաթիոյ Հայերու մասին հնագոյն յիշատակութիւնը Ս. Գր. Լուսաւորիչ եկեղեցւոյ շինութեան առթիւ կ'ըլլայ: Բէֆէն եկած հայ վաճառական մը՝ Կոլմոն անուն (ինչպէս ունի ճշգրտութեամբ Անտ. Մարգր. մէկ ձեռագիրը՝ «Կոլմոն», զոր կը յիշէ նաեւ Բարդէն Ա., Կորոտ էջ 110, վերջին u ուղղելի՛ n) որ արդէն «Ֆրանկական» կը հնչէ (Cosmo Carboğanacı անուն), չեն յիշուցին երբեք 1391ին եկեղեցւոյ շինութեան համար հող կը գնէ եւ Ս. Գր. Լուսաւորիչը կը շինէ: Արդ, պէտք է մտադիր ըլլալ՝ որ 1. Բէֆէցի Հայերու գաղթականութիւն մը միասին եկած կամ արդէն կանխաւ Ղալաթիա հաստատուած ըլլալու էր: 2. Բէֆէցի Հայեր այն ժամանակ եւ անկէ յառաջ արդէն կաթողիկէն էին, ինչպէս վերը տեսանք: 3. Հռոմէական եկեղեցւոյ վարմունքին նայելով, մասնաւոր այն ատենները, ոչ-կաթողիկէներու եկեղեցւոյ շինութեան համար գիւրաւ հող եւ հրաման չէր տրուեր: Այս ասոր Յոյները՝ որոնք չեն յիշուցար տարապետութենէն յառաջ ինչչափ եկեղեցի (3 հատ կ'աւանդուի) ունէին, նոյնչափ մնաց: 4. Ինչպէս վերը տեսանք, Ստամպոլի Եպիսկոպոսը (որ Երուսաղէմի պատրիարքութիւնն ալ կը վարէր Մարտիրոս Եպիսկոպոսի ձեռնդր), 1 Նոյ. 1434ին Քահանայապետին գրած նամակին մէջ, իր կատարեալ հաւանութիւնը կու տայ Հռոմայ հետ միութեան: Ասիկայ 1436ի վերաշնորհութեան մէջ գործ մ'ունեցած պիտի ըլլայ, որ Ս. Գր. Լուսաւորիչ Աւագ դրան վրայ՝ 1733ին գրուած արձանագրութեան մէջ կը յիշուի:

«Պատրիարքն Երուսաղէմի Յէր Եսայիաս», ապա թէ ոչ՝ Բ'նչ հարկաւոր էր «Երուսաղէմի Պատրիարքը», յիշել: 5. Ղալաթիոյ չեն յիշուական իշխանութիւնը Բէֆէի իշխանութեան հետ միասին՝ բուն չեն յիշուցար հասարակապետութեան հնթարկեալ էր: Բէֆէի Պողոս Հիւպատոսն, որ այնչափ փոյթն ունեցաւ Բէֆէի Հայերը Հռոմայ միութեան բերելու 1433 — 1440, չէր կրնար, ինքն կամ իր կառավարութիւնը, անփոյթ ըլլալ Ղալաթիոյ Հայերու մասին, եթէ ասոնք արդէն կաթողիկէն եղած ըլլային: 6. 1451ին Ղալաթիոյ չեն յիշուական իշխանութեան եւ Մահմուտ Բ.ի մէջ հաստատուած դաշնագրին մէջ կը կարդացուի՝ «Իշխանը եւ պատգամաւորը Ղալաթիա քաղաքին՝ Պերոզ, Գարա, Այոզ, Ագորտէս եւ Արշաղ» (Peroz, Gara, Ayoz, Agortez, Arcatz, Լ.Մ. Belin, 154): Այս բոլոր երեւութիւն հայազգիները, եթէ կաթողիկէն չէին, կարելի չէր որ Ղալաթիոյ շինութեանը լատիները, որոնք Բէֆէցի Գոմինիկեան եւ Փրանկիսկեան քահանաներու ձեռքն էին, զանոնք իրեն իրենց ներկայացուցիչները ղգէին:

Կը կարծենք՝ որ մեր նոր տեսութիւնը ըստ բաւականի հիմնաւոր է, եւ ասոր հակառակն ապացուցանել ներկայ ծանօթ գրութիւններով՝ կարելի չէ: Եւ սակայն ասոնց կաթողիկէն եղած ըլլալուն վրայ խուժվելու պատճառ չկայ, վասն զի՝ «կաթողիկէութեամբ», իրենց հայազգիութենէն չիւշէ որ Կորուսած չեն ըլլար, եւ ոչ ալ «սեփականութեան խնդիրներ», կը յառնեն, ինչպէս անոնք ըզեղին եւ սրտերին կը յոգնեցնեն:

Հիմա երբեք հին Ստամպոլի ցամաքակողման սահմանը՝ Էսփրին Գափու, քիչ մ'ալ զբաղելու Բէֆէի Ս. Նիկողայոս եկեղեցւով, որուն համար գրած էի Ա. յօդուածիս մէջ, թէ «Բէֆէն եկող Հայերուն կաթողիկէն ըլլալուն վկայ է նաեւ այն պարագան՝ որ երբ 1475ին Սուլթան Մուհամմետ Բէֆէն նոր հայ գաղութ մ'ալ բերաւ՝ զանոնք տեղաւորեց Էսփրին Գափուի կողմը Բէֆէցի լատիներու Ս. Նիկ. եկեղեցին, որուն մէջ Գոմինիկեան լատին կրօնաւորներու հետ իրենց եկեղեցական պաշտամունքը կը կատարէին: Գոմինիկեան Հայերն անշուշտ ոչ-կաթողիկէներու հետ չէին կրնար եկեղեցական յարաբերութիւն ունեցած ըլլալ», Թէպէտ այս կէտը մեր խնդրոյ նիւթն եղող գերեզմանատան հետ աղբիւր չունի ուղղակի, այլ միայն Ղալաթիոյ նախին Հայերու հետ յիշուած էր, սակայն որովհետեւ այս անցողակի անխորհու-

թիւնս մեծ հակառակութեան բախեցաւ Մարգարեան-Ալպոյաճեանի կողմանէ, եւ Պ. Պոլսոյ «Ս. Նիկիողայոս», եկեղեցւոյ մասին դարեւ մի վեր տիրող շփոթութիւնը հարկ է լուծել, մանաւանդ որ Ալպոյաճեան («Բիւլ.», թ. 4405) շփոթութիւնը վերջին ծայրը բերաւ, ամենայն ինչ «բարութեամբ ընելու», եւ «ջանքատեղութեամբ մարմնով», եւ կրկին ու երեքկին շփոթութեանց մէջ ինկան։ Վասն զի տեմնելով որ Հայոց քով 1475էն յառաջ «Ս. Նիկիողայոս», եկեղեցի մը կը յիշուի, ժողովեց ամբողջեց ամէնը այս քէֆէլի Ս. Նիկիողայոսի վրայ, եւ որպէս զի զայս բոլորովին Տայաղընէ՝ Լատիններէ Հայերէ հիւրասիրուած ուղեց որ ըլլան, եւ հաստատեց՝ հետեւելով Հ. Դուկաս Վ. Ինճինեանի, թէ Հայոց Լատիններ Ս. Նիկիւն վանելու փորձ ըրեր են ծէ դարուն սկիզբը, բայց դժբախտաբար Գաղղիական զենացանն արգելք եղած է. մինչդեռ Հ. Ինճինեան կ'ըսէր, շատ որոշ ապուած՝ թէ «Իբր 1600 ՏԱՃԻԿ Կամեցան զրաւել զայս եկեղեցի...», եւն զոր աւելի մանրամասն կը պատմէ Belin (էջ 117) ժամանակակից գրութեան առնելով, Ալպոյաճեան՝ Հայեր «Կաթողիկոսութենէ», փրկելու խօջ եռանդեանը մէջ այստեղ երրորդ շփոթութեան մէջ ալ ինկած է, որ իրեն համար շատ փնտասկար է։ «Բիւլ.», ի յիշեալ երկար յօդուածին մէջ կը ջննայ ցուցնել որ «Կաթողիկոսութիւնը» Պոլսոյ մէջ 1636ին Պ. Պալմասի ձեռքը մուտած է, անկէ յառաջ այնպիսի բանի մը հետքը չկար, յետոյ ալ չնչին եւ ցանցաւ երեւոյթ մըն էր, եւ սակայն կ'երեւայ թէ մտքին համոզումը ճիշդ ասոր հակառակ եղած պիտի ըլլայ, որ զրշին ծայրին սա խօսքը սպրդած ելած (lapsus calami) է. «Ծէ ԴԱՐՈՒՆ ՍԻԻՋԸԸ (որ է 1600—1700) երբ Կաթողիկի եւ ոչ Կաթողիկի վեճերուն պատճառով Հայերը խելարեւոյս են գտնուող (լատինացի Գաթողիկեանները) վանել ուզած են...» կը շարո նախուի այն առաջապէն, զոր Թուրքն Տայաղընելով կը կարկատէ, ինչպէս տեսանք։ Արդ, այս «Ծէ դարուն սկիզբը» խօսքը ցոյց կու տայ, որ Ալպոյաճեան համոզուած էր՝ որ 1600էն յառաջ երկար ատեն «Կաթողիկի», եւ «ոչ-Կաթողիկի», վեճեր եղեր են Հայերու մէջ, մինչեւ որ «ոչ-Կաթողիկ, Հայեր «խելարեւոյս են», եւ իրենց հիւրընկալած! Գոմինիկեանները!! արտաքսել փորձեր են!!!

Այս շփոթութիւնը նոր չէ, եւ շատ ընդհանուր (Ընդ. Օր. 1901, էջ 79—80). «Բա-

նասեր», 1899)։ Բայց Ալպոյաճեանին շատ դիւրին էր արթննալ, որ Զամբանն ստեղծ կը դործածէ, եւ յատկապէս այս Ս. Նիկի վրային «ջանքատեղ», փաստեր կը քաղէ, եթէ Զամբանին Գ. Հար. էջ 689 ամբողջ Գ. Ա. կարգար։ Էն պիտի տեսներ, որ Էտիրեն Գաթողի Լատինաց Ս. Նիկ. 1621—՝ ինչ Թուրքերէն վերջնականապէս գրաւուելն ետեւ՝ 1660ին այն տեղ կը պատմուի Հայոց Ս. Նիկ. եկեղեցւոյն յարկը, վերաշինուիլ եւ Թուրքերէն կործանուիլ։

Պէտք է լուսաբանել այս Ս. Նիկ. եկեղեցւոյ խնդիրը, որ արդէն Ստամպոլի հին գաղղիականութեան պատմութեան կը վերաբերի։ Ստամպոլի մէջ կար երկու Ս. Նիկ. եկեղեցի. մին Հայոց՝ Ս. Նիկիողայոս Սրանչկաւորը անուամբ, միւսը Լատինաց՝ Բէֆէլի Ս. Նիկ.։

Առաջինը կը գտնուէր Ստամպոլի Մարմարայի կողմը՝ Նէնի Գափուի (տըշարը), Գուլգափուի, Վալանկայի ալճույն Չիլիլի մասին, եւ հիսար տիպի մաս։ Ասոր շատ մօտ էր նաեւ Հայոց Ս. Սարգիս եկեղեցին, որ կը յիշուի արդէն 1360ին (Հ. Տաշեան, 782), որ եւ 1652ին ըստ մասին, 1660ին ամբողջովին այրեցաւ։ Ասկէ զատ Հայոց Ստամպոլի կողմն ունէին «Զարխափան Ս. Աստուածածին», եկեղեցի մ'ալ, որ մէջ միայն զմիայն կը յիշուի. 1479—՝ 50ին Ամիրտովմաթ բժիշկը Սաղմոս մ'օրինակել տուած է «ի գուռն շարխափան Ս. Աստուածածին», Մտագրութեան արժանի է՝ որ ասոր յիշատակարանին մէջ գտնազան կարեւոր անձինքներ կը յիշուին եւ արցոք կը յանձնարարուի. սակայն ոչ Ստամպոլի Պատարարներ, եւ ոչ Էջմիածնի կամ Սոյ Կաթողիկոսները կը յիշատակուին։

Առաջին երկու եկեղեցիները շատ հին են եւ յայտնի վկայ՝ որ Ստամպոլի Բիւզանդեան ժամանակի ամենահին հայ գաղղիականութիւնը հաստատուած եւ ամբողջութեամբ էր տըշարը Նէնի Գափու՝ Վալանկայի քովը։ Այս տեղոյ Հայերու եպիսկոպոսն էր անտարակոյս այն Տէր Գուսիկ, որ 1307 Մարտ 9ին ի Սիս գումարուած ազգային Սիւնհոդոսին մէջ, ուր թագաւորն եւ ժողովոյն Հարք ընդունեցան Հոռոմայ եկեղեցւոյ գաւառութիւնը, կը ստորագրէ՝ «Եպիսկոպոս Ստիկալուայ Հայերուն» (Պալմ. էջ 281)։

Հայոց Ս. Նիկ. Արանչկաւորը եկեղեցւոյ վրայ այսօր հետեւեալ տեղեկութիւնները միայն



չէլէպի կ'ուզէր զատնը շինել, բայց առեւտրոյ պատճառաւ Մոսա գնաց, վասն զի Բէհա Վէլի Մորալի փաշան զինք հետը տարաւ: Ապրո ուղեց Ս. Սարգսի տեղը գնել եւ վերաշինել. Հայք հակառակեցան, խաջատուր զաթողիկոսն ալ միասին: Ապրո հաւանութեամբ ժողովոցեան՝ Ս. Նիկողայոսի տեղը գնեց եւ Ներմիային շինել տուաւ: Հայք, Յոյք եւ Լատինք այրած եկեղեցիներն անհրաման շինեցին: Քեօփրիլիւն մեռաւ, որդին Վէլիբի եղաւ. ամէնը վախեցան: Ապրո Մոսայէն գրեց Ներմիային՝ որ նորաշէն Ս. Նիկողայոսին երեք խորանները քակել եւ իրրեւ զպրոց գործածեն, (այս է Տր. Թորգոմանի փնտած Ներմիայի զպրոցը, "Հ. Ա.", 1910, էջ 274) որ ըլլալով թէ Թուրքերը կործանելու ելին, ինքն ալ խորինէ գնաց: Ղազար յոյն տարին պատրիկ ըլլալով (Ղազար Պատրիարք 1660—3), գնաց Թուրքերու մասնեց, թէ առանց հրամանի Հայք եկեղեցի կը շինեն: Ասիկայ դիպեցաւ Ռաժ-Բ (1662) թուին, երբ Վէլիբի Ազէմ Թագաւորին հետ զոյլիս եկաւ Զատիկի օրը, եւ Նոր Կիրակէին մարդ զրկելով եկեղեցիներուն դռները կնքեց: Տասն օր փակ մնալէն ետեւ Նալիպ լափուշ ալոյրլուծիով կ'աւ գործը քննելու, եւ եկաւ խորանները, պատիկները եւ այլն գրի առաւ եւ Վէլիբին ծանոյց: Քսան օր կնքան, վասն զի ուսմազան էր, անկէ ետեւ զինուորներ եկան եւ հանդիպած քրիստոնեայն բռնեցին տարին, եւ ծեծի տակ կործանեց տուին առնց որոր շինուած եկեղեցիները: Երեք օրան մէջ հիմնայատակ ըրին եւ սկսան փնտռել շինողները: Հայերէն եւ Յոյերէն 15 հոգի բռնեցին եւ Վէլիբին առջեւ հանեցին, զորոնք Վիլիբը մահապարտներու բանտը նետել տուաւ, ասոնցմէ 11 հոգի լոյն էր եւ 4 հայ: Յոյները սիրով կրեցին մահն իրեն նա հատալով թիւն: Իսկ Հայերը Վէլիբին ըսին՝ թէ բռնուողներն անմեղ են, բուն յանցաւորը զէլիկրատցին (Ապրո) է որ առանձին եկեղեցի մը շինել տուաւ. ապարանքներ եւ հարստութիւն ունի, թող սուգանք տայ եւ բանտարկեալներն ազատէ: Այսպէս ըսին Ապրոն, Վէլիբին ահանջը հասցուցին եւ Չէլէպույն դէմ մայաստանագիր տուին. սակայն Վէլիբն եւ նախարարը անոնց մարաստանագիրը պատուեցին: Ապրո ասոնցմէ ազատելու համար Տէֆթէրտարին քով բնակեցաւ: Հայք այնչափ նեղեցին Վէլիբը՝ պահանջելով որ բանտարկեալք արձակուին եւ Ապրո պատժուի, մինչեւ որ Վէլիբը հրամայեց՝ որ այս խնդրոյ համար որչափ Հայ կու գայ,

բունեն բանտարկեն: Անոնք ալ գուրսը ներսը բունածնին կը ծեծէին կը բանտարկէին եւ տուգանքի կ'ենթարկէին: Թագաւորը լսելով՝ դարձեալ ժողովք կ'աւանդէ, բանտարկեալներն աստեան կոչեց: Խնդրոն ելքը գտնելու համար Ուլէմա. ներուն խորհրդով հրամայեց Թագաւորը՝ որ Մէլիսյար պաշին (հիւսանց գլուխը) գլխատեն, առանց Թագաւորին հրամանն եկեղեցիներու շինութիւնը թող տալուն համար, իսկ քրիստոնեաներն արձակեց: Այն ատեն փոխտուրան. ներ ինքն Թագաւորներէն զուրս ելան: Յետոյ ծախու հանց Թագաւորն եկեղեցիներուն գէտինը, մոնետիկ կարգաց՝ թէ Թուրք, Հրեայ, կրնան այն տեղերը գնել. եւ շատերը գնեցին, պարտէզ, տուն եւն շինեցին: (Տես նաեւ Հ. Ին. Ճիճեան, Աշի. Եւր. Հա. Ե. էջ 133.)

Ահա իւր գրութեան սկզբնադրութիւնը, որով կ'իմացնեն թէ 1660ի մեծ հրդեհին պատմութիւնը գրած է արդէն՝ վեց գլուխներով յատուկ մատեան մը, որ հիմայ Ս. Ղազար կը գտնուի (հիմա. Զամ. 691):

Ղազար հարեւր եւ իննեկէ հայոց Թովման որ մեծ կրթութիւն ունի ի լինա Բիւզանդեան. Զկոծ եւ ըզլիւս եկաց բնակաց ազգաց համայն, եւ ըզլիւսաւք քաղաքին անկիպական, Թէ զուերուսն եւ ըզլիւսաւքն հրդեհիւման ի կորգ արկեալ պատմաբանութեան արձանական, Բայց յամսիւսաւք զրեցի յոյն յատուկ մատեան վեցեակ զիւսով մտաբանածովք յարմարական. Եթէ ողբովք սանալովովք բանը զանազան զամենակաց երեք որ անգր պարտական. Նախ ըզլիւսն զվեցեք վաս. արձանական զժառանգիւն ծախական բարբառան. Երկրորդ զզուերուսն եւ զաշխարհաւք եզլական հանուրը ազգաց զկոծ եւ տագնապ կոկեական. Ըզլիւստարմանց եւ զիւսափմանցը զեղերման, որոց ի հուր մեղացիւցը զարեցման: ԶԱստուածածնի եկեղեցոյն ըզլիւսաւքանայն այնքան հրոյն զերեւալ ի բաց աշխարհական եւ հինգերորդ զմեղացի կոծ պաշարման պէտքեւ զիւսմանց ոսկոյ երկրիկ եւ նեղութեան. Համառատեալ ըզլիւսաւքն քաղաքիւցման դրանէ ի զուս ուստի եւ զուրս նշանայն. Եկեղեցիք յարեք եւ պաշարաց ազգաց համայն ճամբը մեղաք եւ բազանքը բնոր աղբորական

Եկեղեցիները շինողները փնտռելնին պատմելով՝ իր անձին համար կ'ըսէ՝

Ըզլիւսաւքանան սուրբ Երուսթեան սգով անցուցեալ ի յիւսիկետար ի սան միւսմ եւ միւր թաղեալ. Տեր Մարտիրոս որ ըստ մարմնոյ հարազատեալ Տեր Երուսթեան որ ըստ հոգոյ վարժապետեալ եւ ընդ նախնի մեղացեալ անդէն յոյժ տառապեալ. Զեկեց իրան իմանալոյ կայաք թախեալ

Բաւաւր որդոյ Պէնտէկոստէն յոր ժամանակ  
Գորուժ աւաւր տան մի յարգի մը փոխարկեալ  
Ուր երեքեանս վարանապատ նշանացեալ:  
Զայս ոչ սրտեմ այլ յիրաւի իմ հաստատեալ  
Գոյր անդ էշ մի որ զգալալիք ընկերացեալ...

Գործոյն վերջը՝ 1666ին գրած ըլլալը կը  
յայտնէ, եւ կը յաւելու հետեւեան, որմէ կ'ի-  
մացուի, թէ իր «Պատմագրական ժամանակա-  
գրութիւնը» կամ ասոր Բ. Մասն առկէ եսեւ  
գրած է.

Ըստ վատթարագործութեան անարժան յայտ՝ Նրե-  
միայի

Բայց ըստ Տեառն մեծ շնորհի անարժանեւ եղելոյ սակի...  
Զի՛նքեօք իմ առեփ, մեռաւ եւ գծնուէնդ եղին ի

տաղան  
Զհամայն եկեայն զիտացի զի այդպէս յաշխարհէս  
անցան

Բայս պատրագական յաշխարհ ցանկացայ յիշատակ  
անուան

Թեպէտ ասորեւ եմ հանուողդ, այլ անի իմ ի վեր  
աճարձան

Ունէի եւ ըզմայի. ըստ երկրորդ հաստեան յարմարման  
Մինն զպատմութիւնս նարգեմիս ի Հայաստան զոր ինչ  
գործեցան

Տեսի զի առականք են անցեալ իրքն եւ քամահան  
Որպէս ոմն որ զվատաշուէրս անգոսնէ յոյժ եղբարկան.  
Արգելի թողի եւ զայն, թէ լեցի ի վնչիլն հըրմայն  
Ապա թէ գրեմք եւ զայն, զի լինիմք մեզ զարաւական  
Թէ Աստուած լցի ինձ հաշտ առնելոյ տեղեան իւր  
արժան

Ժրտեմ չեթողուլ կարտ յաղողէ զայն ի յաւարման  
Ապա թէ առ ինչ կոյէ, եւ իւրն եմ եւ իւրն է հրաման  
Զխոստացեալն բարին ինձ յոյս պիտի ունիմ որ ի  
յաւիտեան...

Յետի 1672ին Պարսից Հաֆթըի բանաս-  
տեղծութիւնները կարգաւոր, զոր երիտասար-  
դութեան կարգացներ էր ժամանակաւ, կը տեսնէ  
որ անոր մէջ շատ տեղ իր այս ոտանաւորնե-  
րուն նոյնանման իմաստներ կան, նոյն պարսկերէն  
տողներն համապատասխանող տեղեր լուսանցքի  
ըլլայ գրած են: Էարուեանկութեան մէջ ժամա-  
նակին եկեղեցականաց եւ աշխարհականաց տգի-  
տութիւններն, անկրթութիւններն եւն ընդար-  
ձակ կը պատմէ (առանց անձի անուն տալու),  
կ'արգարացընէ ինք զինք՝ որ այսուհետեւ ազգէն  
քաշուած, առանձնացած, ուսման կը զրաղի, եւ  
կը վերջացընէ՝

"Եւ այս վատագ մատանց եղիկի

Չեղ ի վայելս յաւէտ եղեցի

Որում եւ զծագութիւնս աւարտում եղի եւ թվին.

Ուձի

Միակի եւ յամոյ մարտի համայնակներն,

Կը կարծեմ՝ թէ բաւական է առ այժմ  
այսչափ՝ Հայոց յատուկ վախկալի Ս. Նիկի.  
Աքանչեւագործ եկեղեցոյ գոյութիւնն ապա-  
ցուցանելու: Առաջին շինութեան կամ սկզբնառու-  
ութեան մասին ընտա տեղեկութիւն չունինք.  
սակայն կարելի է թերեւս ենթադրել որ այն  
իբր Պատրիարքական եկեղեցի շինուած ըլլայ  
վախկալի հնագոյն Ս. Սարգիս եկեղեցոյ քո-  
վելը, Յովակիմ առաջին Պատրիարքին օրերը:  
Այս ենթադրութիւնն անով աւելի կը զօրա-  
նայ, որ այս ժամանակներէն մեզի հասած մէկ  
քանի ազգային ձեւնարկութիւններ այս Ս. Նիկի  
հովանոյն տակ կատարուած են (Ամիրտովաթի  
գրութիւններ, Աբգար Գարի 1567 "Ընդ հո-  
վանեաւ սուրբ Նիկողայոս եկեղեցոյն  
Հայոց» տպած 'Փոքր քերականութիւն'),  
Յովակիմայ յաջորդը Նիկի Արքեպ., Գաղատիոյ  
Չարիսիական Ս. Աստուածածնի վանքին հիմնա-  
դիր Տէր Ներսէսի եղբայրն էր, 1469ին նոյն  
վանքին առաջնորդն ու զարգացընողը ("Բամ.",  
1900, էջ 20), եւ ինչպէս Աղաւ վ. վերջերս  
կազմած նոյն վանքին ձեռագրաց ցուցակին մէջ  
տեսած եմ՝ Նիկի Արքեպ.ի անունը նոյն վանքին  
եկեղեցոյ ներքին դրան վրայ գրուած է իբրեւ  
վերաշինող: Կ. Պոլսոյ Յովակիմ Պատրիարքին  
մահուանէն ետեւ՝ Մուհամմա Սուլթան նախ  
Սեբաստիայէն Տէր Մամիճեօրը բերաւ պա-  
տրիարքութեան համար. երբ սա հրաժարեցաւ,  
Տրապիզոնէն Երբանու վ. բերաւ. երբ սա  
ալ հրաժարեցաւ ("Հ. Ա." 1895, էջ 246—  
9) 1480 Յուլիս ամսէն յառաջ, Գաղատիայէն  
Նիկի Արքեպ.ը բերաւ եւ Պատրիարք կարգեց  
(կը կարծուի 1478ին): Կարելի է որ Գաղատիոյ  
խրաշէն եկեղեցիէն զգուռը՝ շինող Արքեպ.ն  
ալ 1479—80ին վերոյիշեալ "Չարիսիական  
Ս. Աստուածածնի, եկեղեցին շինած ըլլայ ի  
Պոլսոյ, իբրեւ ավտուսիտան՝ ի յիշատակ իւր  
Գաղատիոյ եկեղեցոյն, որուն հետքն այնու-  
հետեւ կորսուած է:

Իսկ Լատինաց Բէֆէլի Ս. Նիկողայոս  
եկեղեցին կը գտնուի Ոսկեղուտի կողմը, Նէնի  
Գափուի (իւշերի), Պալաթի, Էսիրնէ Գա-  
փուի եւ Գարակոճօմիլի միջոցեղբ. եւ այս  
պատճառաւ սոյն շորս անուններով կ'որոշուի  
գրութեանց մէջ: Լատին Գոմիսիկեան վայրերը՝  
որ 1200ի վերջերէն սկսեալ քէֆէէն կու գային  
Ղալաթիա եւ Ստամպոլ տաքելութեան, քէ-  
ֆէի իրենց վանքին Մեծաւորին իրաւասութեան  
ենթարկեալ էին: Ասոնք թէ Ղալաթիան են թէ  
Ստամպոլ վանեական չենեական ժողովը-

գեան քահանաներն էին: Ստամբուլ Էսփրին Գափուր շատ ման երկու եկեղեցի ունէին Ս. Աստուածածինն եւ Ս. Դիկ: Առաջինն արդէն 1453ին որպէս առման ժամանակ կը յիշուի, մէջը կար Ս. Աստուածածին պատկեր մը, որ այսօրս Ղալաթիա Գոմինիկեանց Ս. Պետրոս եկեղեցին կը գտնուի: Ըստ Abbate Giustiniani (տպ. ի Լո. 1656), Գոմինիկեանց աւանդուածն համեմատ, այս պատկերը կը վերաբերէր իրենց քեֆէի վանքին, եւ երբ քաղաքներն քեֆէն առին (1475), փախչող կրօնաւորներ այս պատկերը հետեղին թերին եւ գրին այս Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, որ այնուհետեւ կոչուեցաւ Madonna di Costantinopoli. Եւ երբ այս եկեղեցին 1634ին թուրքերը գրաւեցին, Վենետիկի գեսպանին միջնորդութեամբ այն պատկերն առին եւ Ղալաթիա իրենց եկեղեցին գրին: Sr. de Stochove, որ 1631—2ին Պոլսի գլխաւորէր ի Voyage de Levant գրքին մէջ (2. éd. Bruxelles 1650, էջ 57) կը գրէ. «Վաթիոյիկէները (Լատինք) այստեղ ունին փոքրիկ եկեղեցի մը, ուր սուրբ Բարբար երեք փրանկիական կրօնաւորներ կը բնակին եւ պաշտօն կը կատարեն. այս մասունքն Ս. Աստուածածին անուան Նուիրուած է, որուն պատկերը կ'երեւայ խորանին վրայ, որու մասին այս բարեմիտ քահանաներն ըսին մեզի թէ Ս. Ղուկաս Նկարաւոր ըլլայ: Իբր երեք տարի յառաջ կ'աթոյնիկէներն ստոր շատ մասիկ ուրիշ մասունք մ'ալ ունէին, որ Ս. Դիկողայոսի անունն Նուիրուած էր, բայց թուրքերը զայն մզկիթ ըրին»:

Ստոր շատ մասը կը գտնուէր Ս. Դիկ. եկեղեցին, որուն սկզբնաւորութեան մասին թեւաւոր պատմագիրք միաբան չեն, սակայն ստոյգ է որ խաչակրաց օրերէն սկսեալ միշտ Լատինաց եկեղեցի էր, քեֆէի Գոմինիկեանց ձեռքն էր Ս. Աստուածածին եկեղեցւոյն հետ միասին, Իբրայի Լատին հասարակութեան կառավարութիւնը (Magnifica Comunità) 18-րդ. 1583ին պաշտօնական թղթով կը հաստատէ, թէ այս Ս. Դիկ. եկեղեցւոյ հոգեւոր պաշտօնեան որդի շեղու իրաւունքն իրն է: Դոյնպէս della Valle իրաւացի ճանապարհորդը 1614ին կը գրէ թէ Լատինացիք Ստամբուլ մէջ ունին իրարու մօտ երկու պղտիկ եկեղեցիներ, այն է Ս. Դիկ. եւ Ս. Աստուածածին: Ս. Աննայի եղբայրութիւնն ի Բերա 23 յուլ. 1675ին կը գրէ, թէ «Ս. Դիկ. եկեղեցւոյ մէջ, որ բուն իսկ Ստամբուլ քաղաքին մէջ էր, Գոմինիկեան Լայոները Լատին

տիւնածէսներու համար պաշտամունք կը կատարէին, . . . թեպէտ այսօր թուրքերու մզկիթ է, որոնք բունով թեմար գրաւեցին զայն», եւ 1634ին Ս. Աստուածածինը Սուլթան Մուրատ Գ. ի հրամանաւ: Իսկ եկեղեցւոյ լատինացի մոգովորդն, որ Էսփրին Գափուր գուրս պարսպին մօտ երեք գիւղակներու մէջ կը բնակէր, քանի որ տարիէն ըստ մասին յոռադատան եղաւ եւ ըստ մասին մահաւորական, ինչպէս կը գրէ Գոմինիկեանց Մեծաւորը 8 Հոկտ. 1636ին: Արեւելեայց Խնամատար Կարգինալին ի Լոռո: (Կարգացիք Belin, 112—119.)

Մեր պատմագիրներն սակաւին միայն Գր. Դարանաղցին կը յիշէ, թէ Լայերն «ի հնուց. այս Ս. Դիկ. եկեղեցւոյ կէտ կը գործածէին միայն, յետոյ եկեղեցւոյ մօտ տեղեր գնեցին: Լատինները ըստ չնն յիշատակելի թէ Լայերն Նոյն եկեղեցւոյ մէջ պաշտամունք կատարած ըլլան: Ինչպէս Յովհ. Խուլ Պատրիարքին կենսագրութեան մէջ յիշեցի («Հ. Ա.», 1911, էջ 16), երբ 1627—8ին թուրքերն այս եկեղեցին երկրորդ եւ վերջին անգամ գրաւեցին, Լայերն Գր. Կեսարացի Պատրիարքին դիմեցին, որպէս զի հարկաւոր դիմումն ընէ: Կեսարացին մորժեց զիրեք, ըսելով՝ թէ այն եկեղեցին «Փրանկներու եւ «սեփական տեղացիներուն է, Լայերն ի'նչ իրաւունք ունին միջամտելու: Ասկէ յայտնի է, որ Գր. Կեսարացի, որ այնչափ եռանդուն եւ անխոնջ էր ազգին գործերուն մէջ, համոզուած էր՝ որ Լայերն այն եկեղեցւոյ վրայ իրաւունք մը չուներին: Այս եկեղեցւոյ վրայ Թ. Միհրդատեանցի Յուշատարին մէջ անանուն հեղինակ մը յառաջ կը բերուի, որ թեպէտ Հ. Ինճիճեանի Աշխ. տեղեկութիւնները (էջ 150) գործածած է, սակայն իր կողմանէ Գր. Դարանաղցւոյ (ինքն ալ «Գր. Պարունեք», կը ընէ), «Կաթոլիկաներ», ըլլայն եւ այնտեղ Լայերուն միայն վարձքով բնակարան տրուին աւելցուցած է: Գրածը կրնայ կատարելապէս ճիշդ չըլլալ, բայց եկեղեցւոյն Լատինաց սեպհական ըլլալու աւանդութիւնը կը մասնանշէ: «Քեֆէլի ճամբին, կ'ըսէ, եկեղեցի էր սրբոյն Դիկողայոսի, կէտը Լայոց՝ կէտը Լատինաց. քեֆէլի հետ Ղըրըմէն եկող Թոմինիկեան կրօնաւորներուն ձեռքն էր առ եկեղեցին. քեֆէն կու գային կերթային, անոր համար քեֆէլի մահալլեհի, կամ հայիբան քաղքըցոց մահալլեհի կ'ըսեն միւսն. հիմալ, սարմա թմորուխին սեմին էր Նէ. կամ թէ առ



եկեղեցիին կեսը մեր շնորհի փառքով էր, ետքը Գրիգոր պարոնսերը, որ Երուսաղեմայ պատրիարք էր, ֆրենկին մահապել տալով՝ ժաման կեսը վարձելով կը բնակէինը, ետքը 1600ին տաճիկը ուզեց ճամբ ընել, ետքը ֆրանսիացիներն էլէին թող չի տուաւ. քիչ մը ատեն անցաւ Միւֆփիւն դուռը մէօհրեց, 4 տփս ետքը փարսիով իզին առին. կենէ ետքէն տէօրախնձիւ սուլթան Մուրատին աւանը ճամբ շինեցին,,

Ասոնցմէ յայտնի է՝ որ այս Ս. Նիկի. Հայոց հետ բնաւ կապ չունի: Եւ իմէ Մուլթան Մուհամմաթ Գաթիհ, որ իր հպատակ ժողովուրդն ի մերձուստ կը ճանշնար եւ գիտակցաբար կը գործէր, քէֆէի սրակոտոր Հայերուն մնացորդներն այդ քէֆէի լատին դոմինիկանց եւ Ղալաթայի քէֆէի Հայերուն յանձնեց, եւ ոչ՝ Հայոց Պատրիարքին, անտարափայտ պատճառն այն էր, որ ասոնք այն դոմինիկաններուն հետ, որոնց մէջ Տալազի Միտրաները շատ կային, եւ արդէն Ռանիթու Հայերն ալ նոյն Միտրանութեան կը վերաբերէին, եւ Ղալաթայի քէֆէի Հայերուն հետ կրօնական կապ մ'ունէին:

Ասոնցմէ կը հետեւի թէ 1. Ստամպուլի կողմը Հայոց Ս. Նիկի. Սքանչելագործ եկեղեցին արդէն 1474էն յառաջ գոյութիւն ունէր եւ 1662ին վերջնականապէս կործանեցաւ: Ըստ Ս. Նիկի. Սքանչելագործ եկեղեցին կենդանի էր այն ժամանակի Հայութեան: 2. Բէֆէի Ս. Նիկի. Լատինաց էր, եւ 1475ին քէֆէին բերուած Հայ գիրիներն (եւ ոչ գաղթականութիւն) կաթողիկէ էին, որոնք հաւանաբար միասին կ'ան ճննովացի լատին ժողովուրդեան մէջ խառնուեցան, հետզհետէ լատինացան, եւ 1627—8ի գրաւմանէն ետեւ յառնացան, մահմադականացան, ցորեցան, ընդունցան:

Այս է պատմական իրողութիւնը՝ որ ճիշտէ ինքնութիւնը, շինածոյ պատմութեանց, ջախջախ «փաստաբաւ», չի կրնար ծառայել Ս. Ալպոյաճեանի:

Վերագառնալով Ղալաթիա, Բերա, եւ Պէյօղլուի գերեզմանատան սկզբնաւորութեան, որով նաեւ Բ. յօգուածիս մէջ յառաջ բերուած ժողովրդական «բերանացի աւանդութիւններու», առաջին կէտն հետազոտած կ'ըլլանք:

Ա. յօգուածիս մէջ գրած էի, թէ Ղալաթիոյ եւ Բերայի նախին բնակիչ Հայազգիները կաթողիկէ էին, եւ ոչ-կաթողիկէ Հայեր

Հազիւ 1700ին սկսան Ղալաթիա, եւ մանաւանդ Բերա յառաջնալ, եւ ասոնք ալ սակաւաթիւ էին: Գ. Մարգարեան, եւ մանաւանդ Ս. Ալպոյաճեան բուն կերպով հակառակեցան ասոր, եւ «գերեզմանի սեպհականութեան», ինչի մը յարուցին, որու մասին եւ բառ մ'անգամ ըսած չէի, մանաւանդ թէ որով կերպով գրած էի. «Սոյոց է՝ որ պետութիւնն, արդ եւ արդէն ի սկզբունք ցայսօր զայն ճանշնացած են հայ ազգին գերեզմանատունը, եւ յատկապէս Պէյօղլուի հայ բնակչաց գերեզմանատունը, եւ իբր այսպիսի գործածուած է ԱՆԻՍՏԻՐ եւ ասոնց հպատակութեան թէ Հայերէն եւ թէ կաթողիկէ Հայերէն, դարերէ ի վեր մինչեւ աստուծոյն գործ մէջերը, կաթողիկէ Հայերու 1830ի բաժանումէն քանի մը տասնեակ տարիներ ետքն ալ՝ Նրկուրն ալ իրարմէ անկախ, իւրաքանչիւրն իբրեւ իրեն սեպհական գերեզմանատան մէջ թաղած են իրենց մեռեալները», Այս խօսքն երկու յիշեալ գրողներն ալ իրենց ապացոյցներով պարզապէս հաստատեցին, թէպէտ եւ ինձ գէժ հուռողի կերպաւորանք առած: Ս. Ալպոյաճեան մանաւանդ՝ նման տակաւին շաննուած համարմանութեամբ, կ'ուզէ արդեւիչ ինձ ալ կաթողիկէ Հայերն անուանել «ուղղափառ», (orthodoxe) եւ «կաթողիկէ», (catholique), եւ անոնց ղաթողիկոսը՝ «կաթողիկոս Հայոց Ուղղափառաց»։ Մինչ այս յատկանիշ անուանահոլութիւնն է Հռովմէական եկեղեցւոյ եւ կաթողիկէ Հայոց ի սկզբանէ անտի իւրեանց, եւ զոր ամէն եկեղեցի ալ կը գործածէ իրենց համար առ հասարակ: Եթէ Հայերն ալ իրենց մէջ որոշէն թէ ինչ կերպով յատկանշելու է զիրենք (Եւրոպայի մէջ կ'ընեն՝ «որթոդոքս», Ռուստատան՝ «գրիգորեան», Թուրքիա՝ «ուսուլաբական», կամ «Հայ, պարզապէս, վերջերս նաեւ «Ասքանական», «Հիմադեալ», հայոց կ'երեւայ Ալպոյաճեանին եւ իրեն համակրած խորհրդակալին, թէպէտ իմաստն «հերձեալ եւ ասկիւնի ոչ միացեալ ընդ Հռոմայ», ըլլայ), այն ատեն բարեկիրթ գրողներ անտարափայտ իրենց յատկացուած անուանակոչութիւնը պիտի չզլանան, երբ կրօնական անգաղութիւնը չեղեւ ուզեն: Անոր համար թող Ս. Ալպոյաճեան վստահ ըլլայ, որ կաթողիկէ Հայերն իրենց «ուղղափառ եւ կաթողիկէ» յատկանիշը միշտ պիտի պահեն, թէպէտ ինք ասոր համար Բ. քէլեանի թղթոյ համարանցոյն բոլոր ծրարները սեւազընէ նսկոթեն:

պերկի մեշանով: Միթէ մոլեռանդութեամբ եւ անձնաբանութեամբ կը յուսայ իր սկար ապացոյցներուն ոյժ տալ եւ իր ընթերցողներուն քով վարկ ստանալ:

Բայց կ'արդարացնեն՝ զերեւել անով՝ որ բան մը չեն գիտեր կամ թողիկէ Հայերու պատմութեան վրայ, վասն զի բան մը գրուած չէ: Հայերը լռած են անոնց մասին. իսկ կամթողիկէ Հայեր իրենց գրութիւնները ձեռագիր թողած են, վախճան են հրապարակ հանելէ: Ինչպէս որ ներքին է Հայ-բոլային, Հայ-Հոռոմին, Հայ-Բողոքականին վրայ գրել, պէտք չէ այնչափ անձկամիտ ըլլալ եւ չթողուլ որ կամթողիկէ Հայերն ալ իրենց պատմութիւնը գրեն, որոնք մանաւանդ Հայ ազգին մէջ եւրոպական քաղաքակրթութեան մտնելուն մեծ գեր խաղացած են: Եւ եթէ պատմագրութեան մէջ սխալներ տեսնուին, առանց այլալեւու խնդիրը ցոյց տալու է սխալն աւելի հաստատուն վկայութիւն. ներով, որով միայն ազգիս պատմութիւնը պիտի լուսաւորուի, եւ այս լուսաւորութեան մէջ պիտի տեսնենք մեր համայն հայ ազգին լուս. քննադատ կար գործերը, եւ պիտի օգտուինք ապագային համար, թող ներուի ուրեմն ինչ քանի մ'ընդհանուր գիտողութիւններ, մասնական պատմական աւարկութիւնները նկատողութեան կ'առնուի իրենց համապատասխանող տեղերը:

Գ. Մարգարեան եւ Ա. Ալպոյաճեան յառաջ բերուած գրքերէ մէկն վկայութիւններն այնպէս մեկնել կը ջանան՝ որ կամթողիկէ Հայուն հետքը չերեւայ, եւ «Հայ» անուան տակ բնաւ չհասկնան զանոնք. վկայութիւններ կը բերեն Զ. Չամչեանէ, Հ. Ինճիճեանէ, Հ. Ալիշանէ եւ ուրիշներէն, որոնք սակայն Հայու եւ կամթողիկէ Հայու զանազանութիւն չեն ըներ, երբ ընդհանուր հայ ազգին վրայ կը խօսին. Հ. Ալիշան ամբողջ Կիլիկիոցն, Խաղութի շատ քաղաքներու մէջ գտնուող եկեղեցիներու վրայ եւն գրած է անհաստատ գրութիւններ՝ իրենք «Հայերու» վրայ, թէպէտ եւ տարակոյտ չկայ՝ որ ինք շատ լաւ գիտէր թէ անոնք կամթողիկէ Հայու եին. նոյնն է նաեւ ասոր հակառակն. վասն զի քանի որ վերջնական բաժանում անկուսին եղած չէր թուրքիոյ Հայերուն մէջ, ամէնքը մէկ հասարակութիւն էին քաղաքականօրէն, միեւնոյն պարտաւորութիւններն ու առաւելութիւններն ունէին իրենց Պատրիարքարարին հանդէպ, թէպէտ հաւատարեան քանի մը կէտերու մէջ իրարմէ տարբերէին, որպիսիք այսօր ալ շատ կան ամեն հասարակութեան մէջ ալ: Օրինակ՝ Գ. Մար-

գարեան Հ. Չամչեանէն վկայութիւններ կը բերէ, եւ երբ «Հայ» անունը կը տեսնէ, անմիջապէս «ես», «մենք», «միմայն լուսաւորական Հայեր», «գուր չէ», «կաղապակէ» Հ. Չամչեան եւ Հ. Ինճիճեան երբ կ'ըսեն «ազգիս Հայոց», իրենք զերեւել միասին խառնելով, երկու քննադատներս միաբարբառ կը գրեն, «տես, կամթողիկ վարդապետն ալ» մեր, լուսաւորական Հայոցն «գուր չէ, կ'ըսէ Թառաւ թերուած վկայութիւններն իրենց բնական իմաստով չեն առնուր, որով պատմութիւնը կ'եղծանի: Օրինակ՝ Ա. Ալպոյաճեան (թ. 4414) երկու տապանագիրներ յառաջ կը բերէ 1563 եւ 1564 տարիներէն, եւ յաջորդ թիւին մէջ ասանմէ «Գուրւլանուս Կեռեան գիւղէն Սերոբի օրդի ՕՏանը», որովհետեւ զաւառացի է, կամթողիկէ չլլալը կը վճռէ. իսկ երրորդը՝ «Թերճէման օղու Անտոնի դուստր», յայտնի «կամթողիկական» կը Տնէ, կը զգուշանայ որեւիցէ: Բայց կը ներուի հարցոյնը՝ թէ զաւառացի ըլլալը, զոր ամեն տեղ տակալ իրեն կանոն կը գործածէ, արգենք պահպանման (համայն) մըն է ընդդէմ: «Կամթողիկէն», բայց եւ գիտնով շատ գաւառացի կամթողիկէ Հայեր, Գաղափախէ դուրս. զոր օրինակ՝ Շէպին Ղարաֆիսարցի եւ Թամգառայ գիւղացի Գրիգորեան վարդան վարժապետ», որ 1769էն շատ յառաջ ի Կ. Պոլիս ուսուցիչ էր, եւ մինչեւ 1769՝ 25է աւելի ստուար, մեծ մասամբ կամթողիկական գրքեր ընդգրկանելով մեծ ծառայութիւն մատուցած է ազգին: Ասիկայ իր «Կամթողիկական», համար Զաքարիա Կաղզուանցի Պատրիարքէ թիարան նետուած է, զոր եւ նոյն Պատրիարքին կենսագիրն Պողոս ք. կ'անուանէ «շարուսուց մանկավարժով Ղալաֆայու վարդան», իսկ նաեւ Խաղաղութիւն չէրու օղու (ձիւրանեան, Կենիտ) մուրացի կ'յոր Մինաս մը՝ որուն մէկ ընդարձակ ուսանաւոր Սարգիս Գալի Յովհաննէսեանի (առ Յր. Թարգմանի) մէկ ձեռագրին մէջ յառաջ կը բերուի, «բանասիր տիրացու Մինաս, ի ծնէ կոյր, ի կարգէ մուրացուցաց, վերագրով: (Տես ուրիշ երկու տաղեր, Հ. Ցալեան. 467 խց. ծի:): Չաքարիա Կաղզուանցի զինքը թիարան նետած է, եւ որուն համար Պատրիարքին կենսագիրն Պողոս ք. կ'ըսէ. «Կալ կոյր Մինաս, որ յառաջն էր ջատագով Հայոցն եկեղեցուց, բայց յետոյ քաղովէ կողմանն նոցա», Մինաս գրած է հայ կամթողիկէ ձիւրաճի Յովհաննու Պէյողուի գրերովմատուց թիարական վերաանանմայ գտեր գրարար տապանագիրը, ինքն ալ ի ծերութեան կամուսնով

մեռած է 23 Մայ. 1813ին եւ նոյն գերեզմանատունը թաղուած Յիւզեանց ծակքով, եթէ ուրիշ տեղերէ ստուգած չըլլայի, անտարակոյս Ա. Ալպոյաճեանն օր մ'առնէր ալ պիտի ներկայացնէր ինծի ի պաշտպանութիւն իր գատին, սա լոկ պատճառաւ՝ որ ասոնք ալ զատուացի են, Նեմիկարեմի՝ որ յիշեալ «Թեր-ճիման օղուն», ալ կաթողիկէ եկեւ. ըլլայ, Հիմայ այս երկուքէն որոն կ'ըլլայ գերեզմանոցը, քանի որ առջինը կաթողիկէ չըլլալն իբր ստոյգ ղեկէն ետեւ Ա. Ալպոյաճեանի կ'ուզէ հետեւցնել թէ գերեզմանատունը Հայոց է։ Ասիկայ ապացոյց չէ՝ յօդուածիս սկիւրը գրածիս՝ թէ կրօնապէս իրարմէ տարբեր Հայերն այստեղ կը թաղուէին, իւրաքանչիւն իրբն իրեն յատուկ գերեզմանատունը։ Նոյնը կ'որոշէ նաեւ թ. 4417 յառաջ բերած տապանագիրներուն համար, որոնց մէկ մասը կըստ ընդէն եւ Դաշաւեցի Յահուկներ (Հայ կաթողիկէ) ըլլալ, որոնք Ժն. եւ ԺԸ դարերուն փախած են Պարսից սրէն, Եւրոպա, Պոլս եւ Զմիւռնիա հաստատուած։ Եթէ նոյն իսկ կաթողիկէ չեն, այսինը տապանագիրները պիտի վճռեն տեղականութեան գատը, զոր Մարգարեան-Ալպոյաճեանն կը յարուցանեն։

«Բիւզ.» թ. 4420 Ալպոյաճեանն Հինգ վկայութիւն յառաջ կը բերէ ապացուցանելու համար՝ որ յիշեալ գերեզմանոցը Հայոց է, զոր ես ի գլուխ գորց դրած էի արդէն, սա տարբերութեամբ՝ որ ես կ'ըսէի թէ այնտեղ կաթողիկէ Հայեր, Ղալաթիոյ եւ Բերայի բնակիչներ եւ օտարներ կը թաղուէին անխորի, իբրեւ Ղալաթիա-Բերայի Հայազգիներու յատուկ գերեզմանոց։

1. Յառաջ կը բերէ Ա. Ալպոյաճեանն Երեմիա 2էլէպիի խօսքը, որ Պէյօղուի գերեզմանոցը «մեր գերեզմանները», կ'անուանէ, այն է Հայոց (ինչ տեսակի որ ըլլան), եւ կը հաստատէ Երեմիա թէ այն տեղ կը թողուին Ղալաթիոյ Հայ բնակիչներ, պանդուխտներ, արեւելցի (հինքը «Պարսկաստանցի», կամ «Ալքէմ», Հայերը «արեւելցի», կ'անուանեն) խաճաճներ։ Ինչ տեսակի էին անոնք։ Ա. Ալպոյաճեան «պանդուխտ», «արեւելցի», տեսնելուն պէս՝ «Այս առընդէն կ'հասկնալ թէ գերեզմանատունը Հայոցն է եւ կաթողիկէ խօսք չկայ, կը վճռէ. եւ արդէն ո՞ր տապանագրին վրայ «կաթողիկէ», խօսք կայ, եւ ո՞վ կըսայ ստուգել անծանօթ մարգիկներուն ինչ ըլլալը։

2. Կոզմո Բեռնարդինի (Cosmo Carbo-gnanno) այս մասին խօսքը յառաջ կը բերէ։

Թարգմանիչը շատ լաւ թարգմանած է իտալերէնէ. սակայն Ա. Ալպոյաճեանն (եւ Մարգարեանն) թարգմանութիւնն ալ չեն հասկընար։ Քեօմիւր-ճեան «ոչ-կաթողիկէ Հայոց», գերեզմանատուն տեղը կ'որոշէ, ինչպէս նաեւ ուրիշ ազգերունը, իբրեւ «Հայոց գերեզմանատուն», ի սկզբանէ անտի կոչուած, ինչպէս գրած էի։ Յետոյ կ'որոշէ՝ «գերեզմանատուն կաթողիկէից» որ լատին ծէս ունին», որով կը հասկընայ Բերայի Լատինները (Պրէնկները), եւ ոչ թէ՝ «Լատինաճէններու (այսինքն՝ լատինաճէս Հայերու) Լատինաց գերեզմանատունը թաղուած ըլլալը որոշապէս կը հաստատուի, ինչպէս Ալպոյաճեանն անմտադրութեամբ կը գրէ. ապա թէ ոչ՝ ուր կը քնար Լատինաց գերեզմանատունը՝ զոր բնաւ յիշած չէր ըլլէր. եւ ինչպէս այնտեղ կընային թաղուիլ «Լատինաճէս Հայեր», որ բնաւ գոյութիւն չունէին Բերայի մէջ իբր հասարակութիւն՝ եթէ ոչ քանի մ'անհատներ ազգականութեամբ կապուած Լատինաց կամ Հալէպցիներու։ Եւ որովհետեւ ընթերցող պիտի մտածէր՝ թէ արգեօ կաթողիկէ Հայերը գերեզմանատուն չունէին եւ ուր կը թաղուէին, հեղինակը պատճառաբանօրէն կը յաւելու. «Ըստ որում կաթողիկէներն» որ Հայ ծէս ունին (կաթողիկէ Հայեր) սովոր են թաղուիլ խառն կերպով ոչ-կաթողիկէ Հայերու գերեզմանատան մէջ, ինչպէս յօդուածիս սկիւրը գրած եմ՝ «Պետաութիւնն, ազգ եւ ազգք ի սկզբանէ ցայսօր զայն ճանցած են հայազգին գերեզմանատունը, եւ յատկապէս Պէյօղուի Հայ բնակչաց գերեզմանատունը, եւ իբր այսպիսի գործածուած է անխորի եւ անտայ հակառակութեան թէ Հայերէն եւ թէ կաթողիկէ Հայերէն, դարերէ ի վեր... Երկուքն իրարմէ անխախտ, իւրաքանչիւն իրբն տեղահան գերեզմանատան մէջ թաղած են իրենց մեռաւորները»։

3. Մարգիս գպիր գրած է. «Գերեզմանատուն ժողովրդեան այսր եկեղեցւոյ (Ղալաթիա) է ի Պէյօղու», Ա. Ալպոյաճեանն կ'ապահովընէ որ Ղալաթիոյ եկեղեցին Հայոց ձեռքն էր, ուրեմն գերեզմանատունն ալ Հայոց է։ Անտարակոյս, Լատինաց չէր, Հայոց էր։ Բայց արգեօ Ղալաթիա եւ Բերա նստող հազարաւոր կաթողիկէ Հայերն չենացի էին, եւ իրենք Ղալաթիոյ եկեղեցւոյն ձեռքն չէին։ Ներեալ թէ Մարգարեան-Ալպոյաճեանն այս կէտերու վրայ շատ մտաւ գաղափար ունին, բնաւ իրաց վիճակն հասկընարէ հետամուտ եղած չեն, ասին վոր ոչ գիտեն։

4. Հ. Ինձինեան այս գերեզմանատունը «Ազգիս Հայոց», է, կ'ըսէ: Եւ Ա. Ալպոյաճեան եւ Ընկերը հոս ալ «Ազգիս», բացարձակօրէն իրենց սեպհականելէն ետեւ՝ աղայամօրէն (վան զի «Միամտութիւն», չէ այս), կը կարծեն՝ թէ Հ. Ինձինեան որ գիտամօր «Ազգիս», կ'ըսէ, ինքընքն եւ իր հասարակութիւնն առանց գերեզմանի կը թողու, մինչ ինքն իր ազգականներն ու կրօնակիցներն անձամբ հոն թաղած է:

5. Նշոյրը հոս եւ շատ խօսքերու մասին պէտք է կրկնել այն ամէն տղայամտական փաստերու համար, որոնք ամէնքը ճշմարիտ ապացոյց են մէկ բանի, որ Մարգարեան-Ալպոյաճեան տեղեկութիւն չունին իրենց գրած նիւթին վրայ, «հասարակաց տեղեկներու» աւանանդով վկայութիւններէն դուրս բան մը չունին հարողքեւ, որ ընթերցողքս բան մը ստղծեն, եւ «մեզ հէպիմ սէշտիս» ի պատուաւ կաւ խնդիր ստեղծելու նպատակ ունին: «Ես առջ քան գուսում» ստուածաբանք, հանգերձ ալովքն ըստ Ողբոյն Մ. Խորենացոյ:

Այսպիսի ապացուցութեան ուրիշ շատաչող օրինակ մ'ալ:

Պէտք ունի Հայոց գերեզմանատան մէջ Ս. Գր. Լուսաւորչի եկեղեցւոյ ետեւ, «հաշտականերու գերեզման» կոչուած վայրին մէջ թաղուած է, Վանեցի Եսայիքի Վարսեֆէրեան, որ ունի բարձրկէկ տապանաքար մը, վրան իր պատկերը՝ շալվարով, սոքի վրայ, ձեռքը բռնած իր կտրուած գլուխը, մօրուաւոր: Օգի մէջ զլեռն խալիփախը, երկու կողմը մէկ մօմ վառուած, ոտքին տակն ալ տապանագիր, որմէ կը հասկըցուի, որ Եսայիքի 1808 փետր. 3ին գլխատուած է: Այս տապանագիրը «բար գայիմակութեան» եղած է Գ. Մարգարեանին եւ Ա. Ալպոյաճեանին ոտքերուն:

Գ. Մարգարեան («Ժ», Թ. 761) յառաջ կը բերէ սոյն տապանագիրը, որուն մէջ կ'ըսուի՝ թէ այս մեծ շիրմատունը «պապ Նորին» (բնագիրը՝ սորին) արքունի գրով «Եթող իշատակ սեռիս հայկազեան», ինքը կը փութայ մեկնել մեզի՝ թէ «Վանեցի խարսեֆէրեանի պապը, այսինքն ՀՕՐԸ ՏԵՏԷՆ Արքունական յատուկ հրովարտակով... Եսիսու առած եւ իբր գերեզմանատուն նուիրած է հայ լուսաւորչական հասարակութեան: Դարձեալ թուարանական շորս զործողութիւնն փաղող որեւէ անձ, երբ պարզ ակնարկ մը նետէ վերոնշանակեալ տապանագրին կրած թուականին վրայ, շատ զիւ-

րաւ պիտի կրնայ համոզուիլ թէ նախորդ յօգուածին մէջ եւ վերեւն ալ նշանակած թուականներուս եւ ժամանակակից Օսմանեան Վեհապետներու իշխանութեան շրջաններու հետ որքան ուղիղ կը համամարի ան: Այս առթիւ չմոռնամ ըսելու՝ որ Եսայիքի խարսեֆէրեան նախադասկ մըն է եւ գլխատուած է 1808ին: Եւ իրք Գ. Մարգարեան վերն (Թ. 753) քած էր թէ 1515էն եւ 1520էն տապանաքարեր կան Պէտք ունի գերեզմանատան մէջ, թէպէտ յառաջ բերած չէ, որ բոլոր յօգուածին ամենակարեւոր մասը կ'ըլլար: Արդ, իրեն խորհրդին հետեւելով՝ վայրկեան մը միայն, բնագրին որոշ «պապ» (տէսէն) հօրը կամ մօրը հայրը, համարինք «հօրը տէտէն», իրեն ճարտարութեան թողով քննուցելու: Միւս կողմանէ՝ քանի որ ինք կ'ըսէ թէ 1515էն տապանաքարեր կան, իրաւունք կ'ունենանք նեթագրելու՝ որ 5—10 տարի յառաջ ալ այս նորանշան «պապը» գնած ըլլայ մեր գերեզմանատունը, ըսել է 1808—1508, առնուազն երեք հարիւր տարու միջոց մը: Քանի որ Գ. Մարգարեան «չորս գործողութեան» եւ «սերնդարանական հաշուէ», լաւ կը հասկնայ (Թ. 761), իրմէ կը խնդրեմ լուծել այս հաշիւը. այսինքն երեք կամ իր հնարած այս չորս ծնունդն (սերունդ) առնուազն 300 տարու մէջ տեղադրէ, վրան զի ինձ համար անլուծելի միաց, այնպէս որ կամ 1515 եւ կամ 1808 սխալ պիտի ըլլայ:

Իսկ Ա. Ալպոյաճեան կ'ուզէ որ այս գլխատան խոյն առջեւ գլուխ խոնարհեցնեն, որպէս զի ինք զլուստման դատաւնիքը կարգայ: Ասիկայ ալ սոյն տապանաքարին «պապ»-ին կը կառչի կիիսայ. նոյն բառին ծածկութիւն մը կը գնէ՝ «Պապ բաւը նախահայր իմաստով գործածուած ըլլալը շատ բացորոշ է կարծեմ հոս» (եթէ բացորոշ է՝ «կարծեմ» չի անդի չի մնար): Սակայն «պապը», իր միայ հայերէն լեզուի մէջ «պապ», (մեծ հայր), եւ բնաւ նախահայր չի նշանակեր վրան զի եզակի է:

Այս էր այն վկայագիրը, զոր յօգուածին սկիզբը յիշած էի «Իբրեւ հին գրութիւն մը», լսած ըլլալով Յր. Վ. Թորգոմեանէ, եւ երբ սա օրինակը շնորհեց ինձ, իմացայ «տապանագիր», ըլլալը՝ Եսայիքի ուրեմն եղբայրակիցս Հ. Թ. Աւետիկեան «ոգիական պարագաներ», մէջ կըցաւ. յաւոզել նոյն տապանագրին օրինակն ու գնագրութիւնն անձամբ: Որովհետեւ վերոյիշեալ երկու հրատարակութիւնները կա-

տարեալ ճիշդ չեն, կը հրատարակեմ այստեղ անգամ մ'ալ:

ՅԱՏՈՒԿ ԸՏԱՅՈՂ. ԸՅՈ ՄԵՆԵ ԸԻՄՄԱՏԱՆ  
ԵՂԵՒ ՊԱՊ ՈՒՐՈՒ. ՈՐ ԿԱՅ ԸՆԱՅ ՏԱՊԱՆ  
ԲԵՏՈՐ ԱՅՐԸՆ ԱՅՆ. ԳԸՐՈՎ ԼԻՔՈՒԿԵՆ  
ԵՌՈՂ. ՅԻՇԱՅԱԿ. ՍԵՌՈՍ ԼԱՅԱԼԱՅԵՆ  
ՄԻՆԶ ՈՐ ԸՆԹԵՌՆՈՒՔ. ԶԱՅՈ ՅԱՏՈՒԿ ՏԱՊԱՆ  
Ի ԽՈՅ ԻՐ ՈՒՆՈՂ. ԶԱՅՐՈՒԹԻՒՆ ԱՂԱՅ  
ԱՅՈՒՔԸՆ ԱՅՆ. ՂԱՐԱՍԵՔԵՐԵՆ  
ՅԻՇԵՆ ԼԱՅՈՅՔԵՐ. ԶԱՂՈՐՄԵՍ ԼԱՄԱՅՆ  
ԲԸՎԱԿԱՆ ԼԱՅՈՅ ՌՄՈՒԵ ԵՒ  
ՓԵՏՐԱՎԱՐԻ Գ.

Սկզբնագիրը կը կաղմն «Ներսիսայն»,  
Այս Գ. Մարգարեանէ «Նահապետ», կողուող  
Թարութիւնի վրայ տեղեկութիւններ փնտռելի,  
եւ գտայ մի միակ տեղ յիշատակած, որ  
գլխաւորաւոր նպատակաւ չէ խորանշնե-  
րեանի: Անոն քեզիէն, ղենտիկի Միսիմա-  
րեանց Ղալաթիոյ երբեմնի վարժարանի վար-  
ժապետը, ղենտիկի օրացուցին մէջ թուղթ  
գրելով՝ 1803—17 Հանդիպած դէպքերն օրն  
օրին գրած է: Արեւիկ կը գրէ՝ «1808 փետր. 3  
Էլէէ խանին առաջը վանցի Հայու սուրճի գլուխ  
մը կտրեցին. ըսին թէ վանու բաշաները կուզէ  
բոխել կուտաւ եղբր, վէ աղքատները արդու-  
հալ տը վերեւն աս Հայուն Համար որ չենք  
կրնար ասոր ձառքը դիմաւոր», Էլէէ խանը կը  
գտնուէր Ստամբուլի կողմը, «այրած սեան»,  
հրապարակը:

Արգ, Թարութիւնի «բնագ», (Ճարտասան,  
գրագէտ) «պապը», թող աւուր է իր տեղը,  
իշպէս որ է, առանց անհանգիստ ընելու անոր  
նախնիքը: Արձանագրութեան բնական մեկնու-  
թիւնն է, որ այս պապի իր օրով այս գերեզ-  
մանասան կից մեծ կտոր մը հող գնած եւ  
գերեզմանասան կցած է, այնպէս իշպէս նոր  
գնուած մասի մը լինելու կը յիշատակէ Ա. Ա-  
լայաճեան («Բ», 4614): Ասոր սակայն խըն-  
կրդ նիւթ եղող գերեզմանասան սկզբնաւորու-  
թեան պատմութիւնը դարձեալ խաւարի մէջ  
կը թողուն, եւ ժամանակաւ ընդարձակուած  
կամ հնաբոյն մասին կտորներ կցուած ըլլալը  
կ'ապացուցանեն: Բայց խորանշնեքեանի պա-  
պին նուիրատուութեան պարագան տակաւին  
ստուգուած չէ, վասն զի եթէ Գ. Մարգարեան  
յայտող իր «Հոր թուարանական եւ սերնդա-  
բանական», հաշիւներով ցոյց տալ մեզի Բա-  
րութիւնի պապին կամ հորպապին 1500է յա-  
ռաջ գոյութեան հնարաւորութիւնը, ան ասան  
պիտի համարձակէի հարցընել իրեն, որ արդեօք

Ներսիս է մեզի առնուազն երեհհարիւր տարւոյ  
աւանդութիւն մը, որ 1808ին Ներսիս տապա-  
նագրողը մ'ականջն հասած է, իբր անհաւա-  
տայն մեթո՛ւ, առանց մէկը կարծեմ նախառն  
կամ զրպարտած ըլլալու (Ա. Ալայաճեան),  
քանի որ ինքը Մարգարեան Բերայի կաթողիկէ  
եւ ոչ կաթողիկէ հայ ընազաց մինչեւ իսկ  
50 տարւոյ աւանդութիւնն «ըսի, ըսաւ, ներու  
կարգը կ'ուզէ ինքցնել, եւ այն ասն» գրիս-  
տնեական Ս. Եկեղեցւոյ աստուածաբան Ս.  
Հայրապետներն անոնց մանազգիտութեան վե-  
րաբերեալ նիւթերու մէջ իսկ հրապարակաւ  
նախատող եւ զրպարտող («Բ», 4401) «Հա-  
մանագէտ», Ալայաճեանի վայրկեան մ'անգոյն  
երեսները՝ սոյն աղքատակեր վաշխառուին  
տապանաբարին առջեւ պահ մը պիտի շառա-  
գունին — անշուշտ:

Ղարանշնեքեանի տապանաբարի մասին  
այսչափ գրած էի արդէն, երբ վերջին վայրկե-  
նիս հասաւ «Ճամանակն» 794 թուին մէջ  
Գ. Մարգարեանի նշին նիւթի վրայ հրատարա-  
կած երկու տեղեկութիւնները: Գ. Մարգարեան  
ի սկզբան կը ծանուցանէ՝ թէ ասոր «երկու  
վաշխառուին գրուածքներն են. մէկը «Արաքս»  
ըստգրի 1887, Ա. Գրքը, էջ 53—55 «Երես-  
կան» ստորագրութեամբ. միւսը վանեցի բանա-  
սէր եւ արժանահաւատ ծանօթ անձ մը (ան-  
շուշտ) Մ. Ղաթանեան) իրեն հաղորդեր է:  
Բայց ի վերջոյ կը գրէ՝ թէ «ընդունելով հան-  
գիւրձ» որ «Երեսկան», վաշխառուին աղբիւրներէ  
քաղած ըլլայ իր տեղեկութիւնները,», մինչդեռ  
«Երեսկան», իրեւ պարզ աւանդութիւնն յա-  
ռաջ կը բերեր, ինքն Մարգարեան «խելքի եւ  
արամբարանութեան», հակառակ կը գտնէ զայն,  
վասն զի «ուժանակ,ն այն ժամանակի չի հա-  
մապատասխաներ (թէպէտ մտադիր կ'ընենք» որ  
վառօղն արդէն Ժ. Գրգուս կեներ ի գործա-  
ծութեան եր Ալգոլոյ բանակին մէջ), իսկ վա-  
նեցի բանասիրին գրածը «խելքի եւ արամա-  
բանութեան համաձայն», կը նկատէ, թէպէտ  
ասոր պատճառները մեզք կը ծածկէ: Ի վերջոյ  
կը կցէ ուրիշին հաւատարմաց՝ ստորին ծաղ-  
րանք մը:

«Արաքս», յօդուածին մտադիր ըրած էր  
զիս Հ. Թ. Նիսիսիան, որ նշնպէս ՏՐ. Ա. Թոր-  
գոմեանի ուշագրութիւնը հրաւիրած է, եւ  
վերջեւն ծանօթացած Գ. Մարգարեան:

«Երեսկան», այս աւանդութիւնը յառաջ  
կը բերէ՝ իբր թէ «Հաղապարացոց թագաւոր-  
ներից մին մտադրուեցաւ վերջ դնել պատնե-

րազմասեր Սուլթանի կեանքին, ուղարկելով անոր թանկարժէք արկղի մէջ մէջ պայթուցիկ ուժանակ մը, որ սակարբ բերող պատգամաւորին գլուխը կը պայթի Ստամբուլի մէջ. վասն զի այն «Հունգարացոց թագաւորներէից միան», Վանքի սենեկապետը Գրիգոր կը ծաւալանայ իր գէորգ եղբոր կամ ազգականին, որ Պոլիս Սուլթանին սպառն էր. Սա ալ տեղեկութիւն կու տայ Սուլթանին, եւ յարմար ի վարձ կ'ընդունի գերեզմանոցը եւ վանքի մէջ կառուաներ: «Պատմում» են թէ՛ այս օրուայ գերեզմանոցը, չը նայելով իր այնչափ մեծութիւն, Գեորգին ընծայած հողի զէմը հինգերորդ մասն է ներկայացնում: Ձը դիտեմ որ թուականին, Հայերը գերեզմանոցի մէկ մասը փոխ տուեր են Լատինաց, որ հաղիւ ըսնի մը ննջեցեալ թաղելէն ետեւ «տէր կանգնելով Հայոց սեփականութեանը, վեր են առնում» բռնաբար՝ մեծաքանակ գումարով կառավարութեանը ծախում, որը եւ կառուցանում է այդտեղ Պանկալթիի այժմեան միծաղէն զինուորական գաղութը, զինուորական ճեմարանը, զորանոցը, մանե՛քը հրապարակներով եւ պարտէզներով շրջապատուած՝ Հաղորդում են նոյնպէս եւ այն թէ՛ Պերայի կողմը ընկնող գերեզմանոցի միւս մասը, որի վերայ շինուած են երկու ամազին զօրանոցներ իրանց հրապարակներով, նոյնպէս եւ հասարակաց պարտէզի, բոլորովին կամայական անօրինութեամբ ընծայուած են Բիզա փաշային՝ մի եկեղեցական վատ ամիրայի քմահաճութեամբ...», Գրողը Մ. Աղաբեգեան կ'երեւայ, եւ կարծես կեանքին մէջ Պէյօղլուի գերեզմանատան դիրքը տեսած է, եւ ընաւ կարգացած չէ, այնչափ սխալ եւ հակաժամանակագրական կը գրէ: Դիտեմք ստորագծած եմ, որպէս զի միտ դրուի ինչպիսի անառն եւ հակաժամանակագրական ժողովրդական վէպեր կը պատմուին այստեղ, Ձմեռու օրական վարժարանի շինութիւնը շատ նոր է եւ նորերս ստեղծեցաւ 100 ամեակը. ճշգրտութեամբ դիտենք Լատինաց գերեզմանոցի տեղը, 1859ին Լատինաց կողմանէ քաղաքապետութեան ձրի յանձնուած ըլլալը, Հասարակաց պարտիզին շինութեան ժամանակը եւն. իսկ վերջինչաւ աւանդութիւններէն եւ ոչ մին գրութեամբ մը հաստատել կարելի է:

Վանքի բանասերը նոյն դէպքը նման ձեւով կը պատմէ, իբրեւ ծանօթ եւ հաստատուն եղելութիւն, առանց ըսելու թէ ուստի առած է, սա տարբերութեամբ՝ որ Սուլթանի

սպանման փորձն եղած է ի Պոլստաքնուլ, եւ այն՝ թուանորեւ փորձ մը, զոր ի գերեւ կը հանէ Սուլթանի խոհակերն Վանքի Մանուկ, ի փոխարէն կ'ընդունի Մանուկ, Պոլիս, Պէյօղլու, Հայոց մեծ գերեզմանատունը: Երկուքն ալ ժողովրդական պատմութեան տարբեր են, որ քննադատութեան ձեռն դիմանա:

Դախ՝ Խնջ կարեւորութիւն ունի Վանքի սենեկապետի կամ խոհարարի համար ի Պոլստաքնուլ 1520—68 միջոցներուն Պէյօղլուի մէջ մեծ գերեզմանոց մը ձեռք բերել, քանի որ այն ժամանակ շատ սակաւթիւ հայազգիներ եղած պիտի ըլլան Ղալսթիոյ մէջ, եւ մեծամասնութիւնը Ստամբուլի կողմը կը բնակէր: 2. Գերեզմանոցը տեւութիւններ ամէն ժամանակ եւ ամէն տեղ ձրի որդած են ամէն ազգերու եւ կրօններու մեծաքանակներ համար, քանի որ բնութեան ոյժը զայն կը պահանջէ տեւութիւններէն, եւ Խնջպէս կարելի է որ Սուլթան Ե. ի պէս մեծ Սուլթան մը զայս իրը շնորհ մը տայ իր կեանքը փրկողին: 3. Սուլթան Սուլէյման Ե. 1541ին Պոլստաքնուլ առաւ եւ նոյն տարւոյ Ղալսթիոյ վերապարձաւ: Եթէ վերջինչաւ աւանդութիւնները ճշդ են, Պէյօղլուի գերեզմանատան առաւ Ե. թիւնը 1541—2ին հանդիպած պիտի ըլլայ. բայց անգին Գ. Մարգարեան 1515 եւ 1520էն երկու տապանագիր ունի ձեռքին մէջ ամուր բռնած, ինչպէս վերը տեսնենք. այս երկու թուականներէն ո՞րն է սխալը:

Վանքի բանասերը՝ որ աւելի մտադիր է, 1808ին գլխատուած Թարութիւն Ղարաւեֆերեանի համար կը յաւելու թէ «այս Մանուկին թողուն թողուն է Թարութիւն Ղարաւեֆերեան նահատակը, որ ունի իր տապանաքարը»: Ահա երրորդ մը՝ որ տապանաքարին լոկ «պապ», բարը մեկնել կը փորձէ՝ ոչ թէ Գ. Մարգարեանին պէս «հորը տէտէն», գտնելով, այլ «պապին պապը»: Ինչպէս զմեզ հանդերձ վանքի բանասերէն՝ որ այս Մանուկ-Թարութիւն գերեզմանոցին ճիւղագրութիւնը հրատարակէ, քանի որ ինքն որոշ գիտէ թէ Թարութիւն՝ Մանուկին թողուն թողուն է, կը սպասենք՝ որ 1541էն գէթ 30—40 տարի յառաջ սկսելով, քանի որ Մանուկ 1541ին Սուլթանին երկարատեւ ծառայող վստահելի այլակն էր, որ է դարձեալ առ նուազն 300 տարի, այս գերեզմանոցին հինգ անձանց ծնունդը տեղաւորէ, ինքը քայլ մ'աւելի միջոց ունի Գ. Մարգարեանին:

Այս աւանդութիւնը ժամանակին Աղա-  
րեան կթղ.ին ալ ծանօթ էր, միայն թէ արտա-  
գող Գ. Մարգարեանին սպասածին նման՝ Աղա-  
րեան կթղ. այս այլվազն կ'անուանէ «կաթորիկ»,  
Աղաբեան կթղ. 1889էն սկսեալ Եպարքոսու-  
թեան տուած թագրիրներէն մէկուն մէջ կ'ըսէ.  
«... Ժողովրդեան մէջ տարածուած աւանդու-  
թեան մը համեմատ՝ այդ ժամանակի Սուլթանին  
այլվազ պաշիին, որ հայ կաթորիկէ էր,  
խնդրաբար այն տեղն հայ կաթորիկէից շնոր-  
հուած է իրրեւ գերեզմանաւան»:

Այս անվաւերական անաղութիւնները  
կը շնան աւանդութիւններ, զոր ժամանակիցից  
կամ մերձաւոր ժամանակի հեղինակ մը չէ յի-  
շատակեր: Չստոյգ ստուգել՝ ընդունելի կամ  
մերժելի ըլլայն ապացուցանել, հրատարակիչ-  
ներուն գործն ըլլալու էր: Մինչ այն ասան,  
ցանկանալ հանդերձ Գ. Մարգարեանին, որուն  
կ'ուզէի ուրախութիւն մը պատճառել, պէտք է  
ըսեմ՝ թէ այսպիսի աւանդութիւններ կարող  
չեն «լուսաւորական ազգայնաց», եւ կամ կա-  
թորիկէ Հայոց, «անձեռնմխելի սեփականու-  
թիւն», ապացուցանել:

Հաս երկարեցաւ յօդուածս եւ պատաս-  
խանս. եւ ես գտն կ'ուզէի գիտողութեան առ-  
նուլ Գ. Մարգարեանի, բայց մանաւանդ Ա. Ալ-  
պոյաճեանի այն վարմունքը, որով իմ խօսքերս  
իրենց ուղածին պէս կը փոխեն, կը մէկնեն ա-  
ռանց հասկընալու, եւ իրենց հնարած խօսքերը՝  
իմիտով կ'ուզեն հաստատել: Համառօտութեան  
համար օրինակ մը բաւական համարուի:

Բերայի ծերունեաց աւանդութեան շար-  
քին մէջ ըսած էի՝ թէ «վրացներէն եւ արա-  
բերէն գրով տապանաբարեր կային երբեմն նոյն  
գերեզմանատան մէջ, որոնց ականատես կեն-  
դանի վկաններ կան այսօր», Գ. Մարգարեան  
իմ այս խօսքս ուզած ձեւին կը վերածէ եւ  
յառաջ կը բերէ (թ. 757) ստպեւ. «Կըսէք...  
կաթորիկէ Հայերը այն տեղ — Հարպիլէի յա-  
րակից բաժնին մէջ — կը թաղին նաեւ կա-  
թորիկ վրացիներնրն ու Հալէպցիները: Վրա-  
ցներէն եւ Արաբներէն գրով տապանաբարեր  
կային երբեմն որոք ականատես կենդանի  
վկաններ են», Այս ստորագծուած ալ ինն է:  
Եւ այս վերջին (իր իսկ) խօսքին վրայ կը յար-  
ձակի, եւ կ'ըսէ՝ թէ ասանկ տապանագիր մը  
կայ գերեզմանատան ոչ թէ վերի կողմը կա-  
թորիկաց մասին մէջ (մինչ արգէն ես արտի  
ցաւով ըսած էի՝ որ կաթորիկէից մասին մէջ  
տապանաբար չէ մնայր այժմ) այլ վարի կողմը

Ս. Գր. Լուս. եկեղեցւոյ ետեւը. յետոյ ինքն  
իրեն վրայ ցաւակցելով կը յաւելու, թէ այս  
բարերն «ականատես եւ կենդանի վկաններ  
չեն կրնար ըլլալ, դժբախտաբար», Այս, անմիջ  
եւ անկենդան քարերը, դժբախտաբար, ոչ  
իրեն եւ ոչ ուրիշին համար: Բայց բարեբախ-  
տաբար՝ իմ ըսածս հաստատող ականատես եւ  
կենդանի վկայից մէկն ալ ինքն Գրիգոր Մար-  
գարեանը կ'ըլլայ: Գ. Մարգարեանն այս վրա-  
ցներէն մէկ արձանագրութիւնէն կ'ուզէ հետեւ-  
ութիւն մը հանել. եւ որպէս զի նոր օրաւ-  
մունք մը չգործէ, ես զինք մտադիր կ'ընեմ, որ  
միւսնոյն տեղ, վրացիէն ոչ շատ հեռու կայ  
նաեւ «Կարմեցի Մատուկ Լատուածաւորեանի»,  
դամբանը, որ է Ալաշկերտի Յովհ. Էփ. պապը  
(մեծ հայրը), որ կաթորիկէ Հայոց գլուխն եւ  
առաջին նեղակն էր, իր հաւատքին համար եր-  
կու անգամ արշտուած է, իբր 1820—5ին  
վախճանած եւ այնտեղ թաղուած:

Կը վերջաբնեմ հետեւեալ տարօրինակ  
երևույթն ընթերցողներուս ներկայացնելով:  
1907, Յունիս 11/24ին Բերայի Հայոց Ս.  
Երրորդութիւն եկեղեցւոյ 100ամակ տոնուե-  
ցաւ: Այս առթիւ բաւական յօգուածներ  
գրուեցան հետազոտող անձինքներէ, եւ նա-  
խապատրաստեալ ճառեր կարդացուեցան՝ նոյն  
առթիւ գումարուած գրական հանդիսի մը մէջ:  
Արշակ Ա. Ալպոյաճեանն սոյն հանդիսի մէջ  
կարդաց ճառ մը, որուն մէջ կ'ըսէր. «Զ. Ին-  
ձիճեանի համաձայն, Ժը դարուն Հայ-կաթո-  
րիկներ կը բնակէին Բերայի մէջ: Հայ-  
կաթորիկները Վիրէով մարդիկն օժանդակու-  
թեամբ եկեղեցի (!) եւ տապան շինեցին: Ապա  
Յոյները հոն եկեղեցի կառուցին 1804ին: Գր.  
Ափրայ 1805ին 5000 կանգուն հող գնեց եւ  
1807ին հոն Բերայի առաջին եկեղե-  
ցին կառուցուեցաւ», («Մեքենք», 1907,  
թ. 6513):

Այն միջոցին Բ. Գեշեան կը գրէր. «Բե-  
րայի կողմը 16րդ եւ 17րդ դարերուն (= 1500—1700) աւելի Եւրոպացիք կային, եւ  
անոնց եկեղեցիներն յաճախող նորադարձ  
Հայ կաթորիկներ: Բերա, այն ժամանակ,  
Մայն իբր հիւանդանոց եւ գերեզմանա-  
տուն կը ծառայէր Հայ համայնքին»:  
(«Բիւզ», թ. 3252):

Նոյն տեղ «Հնասէր», ստորագրութեամբ  
անձ մը, որ վաւերագրիներու լուրջ հետազո-  
տող կ'երևայ, կը գրէր. «Հարիւր տարի առաջ  
Բերա Ղալաթիոյ յարակից մէկ մասը կը կա-  
ռուցուած ըլլար»:

մեր եւ հաղիւ Գուլէ-Գարուէն անգին մինչեւ թագաւոր իւր տարուներ. . . . Տարիւր տարի առաջ Բերայի այս ընդարձակութիւնն ալ աննախընթաց էր, վասն զի հաղիւ քանի մը տասնեակ տարիներ առաջ Բերա կ'ալաթա Սէրայէն ալ անգին չէր անցներ: Այն ժամանակ ալ բնակչութեան մեծամասնութիւնն էր քրդացիներէ կ'աղղկներէ. . . . Եղբներն եւ Հայերն ալ քաւական ստուարացած էին ԺԹ դարուն (= 1800—1900) սկիզբը Բերայի մէջ: . . . Այդ խառն ազգաբնակչութեան մէջ որ Բերա լեցուած էր ԺՂ դարուն (1500—1600) սկսեալ, ինչպէս ըսիք, Հայեր ալ կային. . . . Մասնաւորապէս Հայ-հոմէականներն նախընտրած էին Բերա բնակիլ, լատին կրօնաւորներու գրացնութեան համար: Իսկ ըսն Հայ եկեղեցւոյ հետեւողները ԺԵ դարուն մէջ (= 1700—1800) կամ անկէ առաջ կազմած են Գրոնափուլայի մէջ թաղ մը, որուն սկզբնաւորութիւնն Օտալարներով հաւանական է կարծել թէ ծնունդ առած է, Էշէկճի Օտալար, Տուտու Օտալար եւն. մինչեւ հիմա կը յիշուին: Այդ թուականներուն (1650—1780) իբր թէ եղած է Ս. Աստուածածին անուն եկեղեցի մը Բերայի մէջ “յարդանոցի նման կ'ալաթաշէն շտեմարանի, նմանութեամբ. սակայն սակիւր չատ կասկածելի եւ անհաւանական տեսութիւն մ'է: Միայն անորոշ հետք մը սա է, որուն վրայ բնիկ բերացիներու ուշադրութիւնը թերեւս հրաւիրել արժէ: Գրոնափուլա թաղն որքան Հայոց այնքան եւ Ասորոց թաղն է. . . . Գրոնափուլայի մէջ Հայոց Ս. Աստուածածին եկեղեցւոյ մը գոյութեան աղօտ նշանները կան պահած, սակայն անոնք բերանացի ւանդութեանց շրջանակէն դուրս չեն կրնար ելլել: . . . Ս. Աստուածածին եկեղեցին, եթէ գոյութիւն ունեցած է, հաւանօրէն այրած է կամ 1810ին, կամ 1831ին կամ 1839ին. . . . ,

Նոյն Եօթնընեակի գրական հանդիսին մէջ ՏՐ. Վ. Թորգոմեան բանաստեղծիւն մ'ունենցաւ, որուն մէջ 1700ի առաջին քառորդին թագաւոր սկզբնաւորեալ Ս. Եարութիւն հոգեւան վրայ խօսելով բանաստեղծ, ըսած եղաւ՝ թէ “Բաւական թուով Հայեր կը բնակէին արդէն այն տառն Բերայի մէջ, ուր թէեւ մայրենի եկեղեցի դեռ չկար, բայց կար հայ տուն մը, միաստան մը. . . . ,” (“Արեւելք”, 6514):

Մ. ՔՏ. Աշեան փութաց՝ խտուրթեմամբ մտադիր ընել յարգելի բանաստեղծ. “Այս առթիւ անգամ մը գրած էի արդէն յունիս 9 շաբաթ աւուր Մանգուլէ Էֆէնարի մէջ, թէ Բերայի թագաւորին սկսեալ կային տասներկու հայաբնակ օտալարներ, 2էփրէճի, Տուտու, Երմուտ, Մէտաճի, Բաստորմաճի, Բէշկիճի, Թէք խուլուլու, Տիպէք, Քէփուան, 2ախմախ, Կիւրճի եւ Սարգիս անուամբ, եւ եթէ երբեք այդ օտալարներուն մէջ հաստատուած Հայերու Ս'նժ թիւի մը ունենալ կը կարծէք՝ ՇԱՏ ՄԱՍԱ ԷՔ. բացէք եւ անգամ մը աչքէ անցեցէ “Քիւրէճի աշաճէս”, կոչուած տուրքի հաւաքման տնօրէնները, այն տառն միայն պիտի համարուի ըսածիս թէ՛ Բերայի օտալարներուն մէջ բնակող Հայերուն թիւը կարծուածին չափ չէ: ,” (“Ար.”, 6521):

Եւ յարգելի բանաստեղծ իր գեղեցիկ պատասխանին մէջ (“Ար.”, 6534) իր միտքը կը պարզէ այն “Բաւական Հայեր կային այն տառն Բերայի մէջ, ըսած խօսքին, թէ “մեծ թուով Հայեր մը կային, ըսն չէր ուզած, եւ թէ Գրեմուլայի “12 օտալարի,՝ Նոյն իսկ ըստ Աշեան ՔՏ. 1500—1800ի չափ Հայերը “մեծաւ մասամբ պանդուխտ էին եւ ըստար,՝

Սակայն Աշեան ՔՏ. “1500—1800 Հայեր կային,՝ չ'ըսեր “Մանգ. Էֆէք.՝ի մէջ (1907, Բ. 1834), այլ “Թագաւոր շրջակայքը եւ մինչեւ Ղալաթիս Հայերը 1500—1800 բնակած են՝ 2էփրէճի. . . կոչուած տասներկու Օտալարի մէջ. . . եւ 1807 թուականէն առաջ տոյն Օտալարներուն մէջը կամ շուրջը Հայերը եկեղեցի չունէին, եւ միայն կար թագաւոր Նոյն հոգեւանը,՝ Հետեւաւոր Աշեան ՔՏ. գիտողութիւն ընելով բանաստեղծին “Բաւական թուով Հայեր,՝ խօսքը արագբերու տառն՝ այդ Օտալարի Հայերուն մեծ թիւ մը չկազմելը կը հաստատէ, եւ Նոյն իսկ 1500 թիւ մը նշանակած չ'ըլար Աշեան ՔՏ.:

Եւ Օրմանեան Պատրիարք եւ Աշեան ՔՏ. եւ Գազմաճեան քարտուղար եւ այլ մասնագէտք իրենց միաբան քննութեանց մէջ իրենք ստուգելէն ետեւ՝ Նոյն առթիւ Բերա Ս. Երրորդութեան ճակատն արձանագրութիւն մը կը դնեն, որուն նաեւ վիճակագր օրինակը ժողովրդեան կը բաժնին: Ասոր մէջ պայտածապէս կը հաստատեն՝ թէ “Թաղն Բերայի երբեք ՓՈՔԻԿ ԼԱՏՈՒԱՆ Տայաքնակութեան քարաւանեալ ՅԱՐՄԱ ԼԱՐԻԻԻ. . . ,



իրաց այս վիճակին մէջ ինչ անցաւ դարձաւ, որ այսօր նորի Ա. Ա. Ալլոյցաճեան, արկացութեամբ Աշճեան-Գալմաճեան եւ Անգլ., բոլորովին մոռացութեան տալով չորս տարի յառաջուն իրենց բոլոր պաշտօնական եւ անպաշտօն, բայց միաձայն գրութիւնները, կը ճգնին ցոյց տալ՝ որ բերայի մէջ ի սկզբանէ հետե ոչ-կաթողիկէ Հայեր մեծամասնութիւն ունէին, կաթողիկէներ իբր թէ Հային, եղածն ալ արդէն լատինացած «Ֆրէնկացած», էին: Արեւ-գեա իրականութիւնն այն է՝ որ այն Հաղարատի գեթողիկէ Հայերն, որոնք եթէ ուզէին կրնային անմիջապէս լատինաճէս ըլլալ եւ ամէն առաւանքներ ազատիլ, դարերու ընթացքին մէջ անընդհատ Հայաճուրղ իրենց Պատրիարքարանէն, իրենց հայրութիւնը պահելու համար՝ իրենց համոզուող հաւատքին հետ, ճակատ տուն վեց ետեմ արեւահեղ Հայաճուրղներու գէմ, իրենց գործն, ստացուածքն, ընտանեքը, կենսքը կորուսին ձիարաններու եւ գառն արքայանայ մէջ: Ասանց վրայ եթէ կ'ուզուի, շատ մանրամասնութիւններ ունիմ:

Ես այս արարքին վիճակին երեւոյթը կ'արգարացնեմ անով՝ որ Գ. Մարգարեան եւ Ա. Ալլոյցաճեան «իրենցմէ անկախ պատճառներով», գրեցին ինչ որ շատաւ գրեցին:

Բայց Ա. Ալլոյցաճեան ի վերջոյ գործն ամուր կ'պակելու համար, ինծի շէրի օրէքներէն յօդուածներ յառաջ կը բերէ, զիս համոզել ուզելով՝ որ Շէրիի այս ինչ օրինաց համեմատ այդ խնդրական հոգէն կաթողիկէ Հայերու կտոր մը չի տուիր: Այս բոլորովին անտարբեր իմ թողու զիս, որ միայն պատմագրութեամբ կը զբաղեմ, առանց նկատողութեան առնելու՝ թէ իմ գրութիւններս նիւթապէս օրուն կրնան նպաստաւոր ըլլալ եւ կամ օրուն աննպաստ, բաւական որ Հայուն նպատակաւոր ըլլան: Այսու հանգրժան թէպէտ շէրիաճէ բնաւ չեմ հասկնար, բայց լատն եմ՝ թէ այնտեղ «Ֆէթմա աշատըլը» կէօրէ վերիլը, (ինչպէս կը հասկըցնեն, այնպէս կը տրուի վիճիւր.) եւ սրտի փղձկանք կը կարգամ՝ որ Հայերուս արկաւ, Հողը, տունը, դրամը, աղէկները, կենսքը կը յափշտակուին, եւ գործիւններ կ'արգարանան, չգիտեմ որ օրինաց որ յօդուածին համեմատ:

Աւերին ի չարեմ է:

(Հրահանգներ)

Հ. Գ. ՊԱՆԿՆԱՐԱՆԻՆ

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

(Հրահանգներ)

49. Վերը թ. 14, առիթ ունեցող Ոսկերեւ լատիներէն-աշխարհաց Ա. Նիկիայի Մեթրոպոլիտէ վերպակ մը ուղարկելու, զոր Մատենադարանիս թիւ 1. Յայրմատարքին սովեպարեան ընթերցուածք հաստատեց, շեռապարս մէջ պահուած պահասաւոր՝ բայց իբրեւ անդէ թանկագին հաստածին քանի մը դասական կարեւոր ապրքերութիւնները մասնակի պիտի բնմ հոս, որոնց ընտիր նկարագրին ընթերցողն անձամբ պիտի համալուի: 1. 89. «Վասն էր արգելի փողոյ, քանիք եւ ի Ան-լերինն զմիայն տեսնեմք», (Բ. Տար.) էջ 448 = 26ա. «Ի Վեթիւս լերինն» թղ. 128ա. (այս ընթերցուածի մասին կարեւոր է համեմատել Նորայր «Կրկն իւրեղեղ» եւ Նորին խորհուրդներէն, էջ 90—91): — 2. «Արգի ի վերայ իւրաց բերելու» — հայեր, էջ 449 = «Ի խառն հայերն» եւ լերինն, թղ. 128բ. — 3. «Հաւանքն ի հրեշտակաց», էջ 450 = լատ. «Հայերն» ի հրեշտակաց, թղ. 128բ. — 4. «Չմտաւ ամ որտէս է որ...», էջ 450 = Ուրէի իւր. է. թղ. 129ա. — 5. «Թորամ տեսնեցին յայտն ի վերայ երբեք ուրեք», յայտն գիտեցին, էջ 450 = «Թորամ տեսնեցին երբեք» — Դեւիտիւնն (26ա. տեսնեցին), թղ. 129ա. 6. «Երբեք եւ յայն հրեշտակագրութեան երբեք» որ բոլէ եւ հրեշտակագրութեան, էջ 450 = «Եւ ապա բարբառ հրեշտակագրութեան փղձկն» ապա տեսնել հրեշտակագրութեան, թղ. 129ա. — 7. «Երբեք մը երբեք մը Գրեւեք» որ ի վերայ երբեք տեսնեցին, էջ 450 = «Ուրեքն Գրեւեք» եւ Գրեւեքն տեսնեցին, որ ի վերայ երբեք երբեք (26ա. յեղի) Գրեւեքն, թղ. 129ա. — 8. «Ու քան զամենայն քեհնեմ անտարբայն ի այն, գրեցուցը զայն յայն իւր», էջ 450 = «Չէքն քան զամենայն քեհնեմ անտարբայն եւ քան զամենայն քեհնեմ քան զայն», թղ. 129ա. — 9. «Թէ մահ յայն-թիւ կամ քաղաքացաւորմանք... այնպէս շատաւ զմեք ոգին, էջ 450 = «Մահ յայն-թիւ», թղ. 129ա. — 10. «Ուրպէս թէ արգել իսկ իւր իսկ իսկ», էջ 451 = «Ուրպէս թէ (26ա. օրդեւ եւ է) արգել իսկ իսկ իւր իսկ», — Եթէ փողոյի հաստածին մը մէջ այսպիսի եղծում, այսպիսի աղանդով կրած է ապագիւր օրինակը, ինչպէս կարելի է առանց ձեռագրական համեմատութեան հրատարակուած ապագրին նախանկար օրինակէն շեղած ընթերցումներու վրայ յեղծ ընդհանրացնել եւ յանգրիլ որոշ, հաստատուել եղանակցութիւններու: Համեմատական հրատարակութեանց կարգը տակաւին անխառնակելի կը թողու առաջի վրայ կառուցանելու հարկը:

50. Եւ կարգանք միեւնոյն Մեթրոպոլիտէ մէջ «Ու ապագին իսկ քիւր որոշմանք» եւ ի մարմին,